«ԵՐԵՎԱՆԻ Լ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 155 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ




# 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ՆԱԻՐԱ ԱՐԱՅԻ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ....................................................................................................4
Ծրագրի  նպատակը ....................................................................................................7
Ծրագրի խնդիրները ....................................................................................................7
Ակնկալվող արդյունքները ....................................................................................................8
ԵՐԵՎԱՆԻ Լ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 155 ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ....................................................................................................10
Առկա հիմնախնդիրներ....................................................................................................12
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ....................................................................................................15
Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին ....................................................................................................16
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ....................................................................................................19
ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ....................................................................................................20
ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ....................................................................................................33
Հաստատության խորհուրդ....................................................................................................33
Մանկավարժական խորհուրդ ....................................................................................................35
Մեթոդմիավորումներ ....................................................................................................36
Ծնողական խորհուրդ....................................................................................................36
Աշակերտական խորհուրդ....................................................................................................37
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ....................................................................................................45
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ....................................................................................................52

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ....63

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԽՐԱԽՈւՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈւԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈւԹՅՈւՆՆԵՐԸ....68

ՏՀՏ, ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....79

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ ....86

ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ (ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ) ....90

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ....110

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ....116

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ. ....120

ԱՄՓՈՓՈՒՄ---- 123

ԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ----124

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:*

*Հանրակրթության մասին ՀՀ օրենք*

Կրթության մասին ՀՀ օրենքում որպես հանրակրթության հիմնական նպատակ՝ սահմանված է սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումը, մասնագիտական կողմնորոշումը, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը, ինչպես նաև կարևորվել են հետևյալ հիմնախնդիրները.

1) սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը.

2) համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը.

3) սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագիր իրականացնելը:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

«Կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ» ռազմավարական փաստաթղթում նշվում է. «Հասարակական ներկա զարգացումները նոր սրությամբ են դնում կրթության խնդիրն ամբողջ աշխարհում: Կրթությունը դիտվում է իբրև հիմնական միջոց՝ դիմակայելու աղքատության արմատավորման, սոցիալական բևեռացման խորացման, ժողովրդավարական զարգացումների վտանգման, աղետներին և ռիսկերին, այդ թվում՝ համաշխարհայնացման հետևանքով ի հայտ եկող նոր մարտահրավերներին»: Ժամանակակից աշխարհում ավելի հաճախ է խոսվում ոչ թե մարդու կրթության, այլ սովորելու իրավունքի մասին, հետևաբար անհրաժեշտ է սովորելը դարձնել ազգային կենսակերպ, ինչը համապատասխանում է Հայաստանի վերափոխման ռազմավարության տեսլականին և շեշտադրում կրթական համակարգում փաստացի ներգրավված լինելուց զատ նաև լիարժեք և արդյունավետ ընդգրկման խնդիրը:

Կրթության զարգացման ռազմավարական բոլոր փաստաթղթերում կարևորվում է կրթության որակի բարելավման անհրաժեշտությունը, որը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի՝ որպես հիմնական նպատակ՝ ամրագրված է կարողունակությունների վրա հիմնված մոտեցման հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովման անհրաժեշտությունը: Սահմանված են նաև միջնակարգ կրթության կարողունակությունները: Դրանք են՝




Դպրոցի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ եմ համարում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու հետագա բարելավումների համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

***«Երևանի Լ.Միրիջանյանի անվան հ.155 դպրոց» ՊՈԱԿ- ի*** զարգացման ծրագրում, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման

ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» №-35 հրամանի պահանջներին համապատասխան, ըստ ոլորտների սահմանվել են նպատակները, խնդիրները, դրանց լուծման համար նախատեսված միջոցառումները, անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսները, ժամկետները, գնահատման չափանիշները, վերահսկողության մեխանիզմները, պատասխանատուները, ռիսկերը, ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները: Յուրաքանչյուր ոլորտի զարգացման ուղղությունների նախատեսման հիմքում տվյալ ոլորտի ուժեղ և թույլ կողմերի վերլուծության արդյունքներն են:

Ծրագրի մշակման ընթացքում ռազմավարական ուղղությունների որոշման և հետագա կարիքները ճշտելու նպատակով պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ եմ ունեցել կրթության գործընթացի մասնակիցների հետ՝ հիմքում ունենալով այն նվաճումներն ու հաջողությունները, որոնք նպաստել են դպրոցի առաջընթացին և կրթական գործընթացների բարելավմանը: Հետագա նպատակների կանխորոշմանը և առաջնահերթությունների սահմանմանը նպաստել են նաև նախորդ հինգ տարիների ընթացքում կառավարման ու ղեկավարման գործընթացների բարելավմանն ու թիմային աշխատանքի կազմակերպմանն ողղված տարբեր մեթոդների կիրառման ու գործընթացների արդյունավետության գնահատումը, որի արդյունքում դպրոցում ձևավորվել է համագործակցային և առավել մասնակցային ներդաշնակ մեխանիզմների ներդրման և փոխվստահություն բարենպաստ միջավայր: Որոշ վերլուծությունների հիմքում կրթական գործընթացի մասնակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքներն են, որոնք հնարավորություն են տվել պլանավորելու զարգացման ծրագրի հետագա ուղղությունները: 2023-2028թթ. համար դպրոցի զարգացման ծրագիրը կազմելու նպատակով հանդիպել եմ մանկավարժական և ծնողական խորհուրդների ներկայացուցիչների հետ: Ծրագրում ըստ ոլորտների մանրամասն ներկայացված է դպրոցի ներկա վիճակի նկարագրությունը, բացահայտված են ուժեղ ու թույլ կողմերը:

**Զարգացման ծրագիրը կազմելիս օգտագործվել են ոլորտը կարգավորող տարբեր նորմատիվ իրավական փաստաթղթեր.**

- « ՀՀ Սահմանադրություն»,
- «Կրթության մասին ՀՀ օրենք»,
- «Հանրակրթության մասին ՀՀ օրենք»,
- «ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք»,
- «ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն»,

- «Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. սեպտեմբերի 22-ի «Պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հունվարի 15-Ի № 16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» №35 հրաման»,
- «Հանրակրթության պետական չափորոշիչ»,
- «ՀՀ Կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ» օրենքը,
- «Երևանի զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագիր»
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 05 օգոստոսի 2022թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» № 30-Ն հրամանը
- Կրթության ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր, ինչպես նաև դպրոցի նախորդ հինգ ուսումնական տարիների դպրոցի ներքին գնահատման հաշվետվություններում ամրագրված վերլուծական տվյալների բազան, տնօրենի տարեկան հաշվետվությունները և այլ փաստաթղթեր:

## Ծրագրի նպատակը

Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության զարգացման միտումներին, կրթական գործընթացի մասնակիցների կարիքներին ու հնարավորություններին, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված և առարկայական նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան յուրաքանչյուր սովորողի համար որակյալ և մրցունակ կրթություն ստանալու պայմանների ապահովումն է:

## Ծրագրի խնդիրները

- **Հաստատության ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարելավում,** որը կապահովի հասանելի որակյալ կրթություն բոլոր սովորողների համար:
- **Կրթական գործընթացի արդյունավետության բարձրացում,** որը կնպաստի սովորողների հոգևոր ու բարոյական դաստիարակության, շնորհալի երեխաների զարգացմանը:
- **Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողունակությունների զարգացում**, որը կնպաստի նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների ու մոտեցումների, առարկայական նոր չափորոշիչների ներդրմանը, մասնագիտական բարձր որակներով մանկավարժական համակազմի ձևավորմանը:

- **Որակյալ կրթության ապահովում**, որը կնպաստի հանրակրթական պետական չափորոշչով սահմանված ուսումնառության վերջնարդյունքների ապահովումը:
- **Ուսուցման և ուսումնառության իրականացում** հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթության բովանդակային բաղադրիչների ապահովման հենքի վրա:
- **Արդիականացված կրթական միջավայրի ապահովում,** որը կնպաստի սովորողների կարողունակությունների ձևավորմանը, ուսուցման և ուսումնառության գործընթացների կազմակերպման արդյունքում կրթության բովանդակային բաղադրիչների ապահովմանը:
- **Համագործակցության բարելավում,** որը կնպաստի մասնակցային կառավարման և դպրոցի առջև ծառացած դժվարությունները համատեղ հաղթահարելու գործընթացների արդյունավետ իրականացմանը, կրթության գործընթացի մասնակիցների՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու մշակույթի ձևավորմանը:
- **Նյութատեխնիկական բազայի համալրում, որը** կնպաստի ուսումնական միջավայրի արդիականացմանը, կապահովի անհրաժեշտ պայմաններ հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման համար:
- **Մասնակցային և համագործակցային մոտեցումների կիրառում,** որը կնպաստի փոխվստահության միջավայրի և թիմային պատասխանատվության ամրապնդմանը:
- **Շենքային պայմանների բարելավում,** որը կնպաստի ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետությանը, կապահովի բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հարմարավետ պայմանների ապահովումը:

## Ակնկալվող արդյունքները

- Մինչև 2030թ. հանրակրթության զարգացման պետական ծրագրի պահանջներին համապատասխան ուսուցման և ուսումնառության կազմակերպում
- Ուսումնառության արդյունքների հիմնական ցուցանիշների բարելավում, կրթության որակի ապահովում
- Կրթության գործընթացի մասնակիցների ակտիվ ներգրավում դպրոցի խնդիրների լուծման գործընթացներում
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ամրագրված՝ ուսուցչի մասնագիտական չափանիշներին համապատասխանող համակազմի առկայություն
- Մասնագիտական բարձր որակներ ունեցող ուսուցիչների առկայություն (տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորման դիմող ուսուցիչների թվի ավելացում)
- Դպրոցի՝ որպես ուսուցիչների վերապատրաստման կենտրոնի կարողությունների բարելավում

- Վերապատրաստող ուսուցիչների հմտությունների զարգացման, ստեղծագործական և արդի դասավանդման մոտեցումներ կիրառելու մոտիվացիայի բարձրացում
- Դասապրոցեսը ավելի գրավիչ դարձնելու սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով դասավանդման ընթացքում Էլեկտրոնային և այլ ռեսուրսների օգտագործում
- Սովորողների՝ ըստ հետաքրքրությունների ակումբների գործունեության բարելավում
- «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի  պայմանների ընդլայնում
- Կրթության առանձնահատուկ պայմանների ապահովում բոլոր, այդ թվում՝ բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սովորողների համար
- Ստեղծագործող ուսուցիչների և սովորողների ինքնազարգացման  համապատասխան հարթակների ապահովում
- Ուսումնամեթոդական և դիդակտիկ նյութերով կրթական գործընթացի շարունակական ապահովում
- Արդիականացված նյութատեխնիկական բազայի առկայություն
- Փոխվստահության և համագործակցության միջավայրի առկայություն և այլն:



«ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» օրենքում նշված է. «Կրթության զարգացման տեսլականն է՝ յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով, և կրթության համակարգի առաքելությունն է բացահայտել և հնարավորին չափ զարգացնել յուրաքանչյուրի տաղանդը՝ ընդլայնելով իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու անհատի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը: Ծրագրի վերջնական նպատակը ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ ձևավորելն է, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, և կիանրահռչակվի կրթությունը՝ որպես հանրային բարիք՝ ապահովելով կրթության բոլոր շահակիցների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելով ակտիվ քաղաքացիական դիրքորոշում և մասնակցային ժողովրդավարության վրա հենվող հանրային համերաշխություն»:

Հաշվի առնելով 21-րդ դարի պահանջներին համապատասխան կրթության կազմակերպման և սովորողների վերջնարդյունքների ապահովման մոտեցումներով պայմանավորված բովանդակության կատարելագործմանն ուղղված զարգացման միտումները և Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների պահանջները՝ առաջիկա հինգ տարիների համար դպրոցի առաքելությունը համարում եմ՝

Արդի պահանջներին համապատասխան՝ բազմակողմանի գիտելիքներ, կարողունակություններ, հմտություններ, դիրքորոշում ունեցող ազգային ու համամարդկային արժեքներ կրող, համակողմանի զարգացած, մասնագիտական կողմնորոշում ունեցող քաղաքացու ձևավորումը:

Դպրոցի առաքելության իրականացման համար ըստ դպրոցի գործունեության ոլորտների առանձնացրել եմ ռազմավարական նպատակներն ու խնդիրները: Իմ գործունեության ընթացքում առաջնորդվելու եմ հետևյալ կարգախոսներով, որոնք հնարավոր կդարձնեն թիմային աշխատանքի կազմակերպումը, ուսումնական միջավայրի բարելավումը, փոխվստահության մթնոլորտի ամրապնդումը: Դրանք են՝

Կարգախոսներ

| Մասնակցային կառավարումը գործընթացների արդյունավետության ապահովման գրավականն է: | Առաջընթացը ենթադրում է փոփոխություններ: | Փոխվստահությունն ու համագործակցությունը հաջողության հասնելու երաշխիքներ են: |
|---|---|---|

## Առաքելության իրագործման առկա ռեսուրսները

1. Մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող մանկավարժական համակազմ
2. Ուսուցման արդի տեխնոլոգիաներին, մեթոդներին տիրապետող և դասապրոցեսի ընթացքում կիրառելու հմտություններ ունեցող աշխատակազմ
3. Կրթության բովանդակության փոփոխություններին արձագանքող և մասնագիտական որակները բարելավելու պատրաստակամ անձնակազմ
4. Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար
5. Սովորողների արժեքային համակարգը ձևավորելու տարբեր միջոցների առկայություն
6. Սովորողների նախասիրություններին ու հետաքրքրություններին համահունչ խմբակների առկայություն
7. Ուսումնառության կազմակերպում սովորողների կարիքների և հնարավորությունների հաշվառմամբ (կրթության առանձնահատուկ կարիք ունեցող սովորողներ)
8. Համագործակցություն և համատեղ ծրագրերի իրականացում կրթության գործընթացի բոլոր մասնակիցների հետ
9. Ուսումնական տարածքների համապատասխան պայմաններ, անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և այլն
10. Ֆինանսական միջոցների և ժամանակի ռեսուրսների արդյունավետ կառավարում:

## Առկա հիմնախնդիրներ

- Իրականացնել կրթության որակի բարելավմանն ուղղված ծրագրեր

- Ներդպրոցական վերահսկողության նոր մեխանիզմների կիրարկում
- Օժտված երեխաների հետ ծրագրերի իրականացում
- Նորարարական նոր մոտեցումների և ծրագրերի ներդրում
- Տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորման մասնակցող ուսուցիչների թվի ավելացման նպատակով խրախուսման և մոտիվացման տարբեր ձևերի կիրառում
- Կրթական միջավայրի շարունակական արդիականացում
- Կրթության գործընթացի մասնակիցների և կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության նոր ուղիների որոնում
- Բոլոր սովորողների համար հավասար պայմանների ապահովում
- Ֆինանսական լրացուցիչ միջոցների հայթայթում և այլն:

Առաքելության իրագործման վրա իրենց դրական (նպաստող) և բացասական (խոչընդոտող) ազդեցությունը կարող են ունենալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: Առաքելությանը համապատասխան՝ նպատակների և խնդիրների սահմանման ժամանակ հաշվի են առնվել նաև այդ գործոնների հնարավոր ազդեցությունները: Դրանց մի մասը ներկայացված է ստորև.

### Դրական ներքին գործոններ

- Առաքելության սահմանման և իրականացման գործընթացներում մասնակցային գործելաոճի կիրառում
- Բոլորի կողմից ընդունված առաքելության հստակ պատկերացում
- Առկա ռեսուրսների արդյունավետ կառավարում
- Առաքելության իրագործման առաջնորդող թիմի առկայություն
- Կրթության գործընթացի մասնակիցների առաջարկների, կարծիքների հաշվառում
- Համակարգված պլանավորման և իրականացման գործընթաց
- Ղեկավարման ժողովրդավարական ոճ

### Բացասական ներքին գործոններ

- Մտավախություն և ձախողման վախ
- Անհամաձայնություն առաքելության շուրջ

- Թյուրըմբռնում և վստահության պակաս
- Անորոշություն
- Իներցիա, աշխատակազմի անդամների և կրթության գործընթացի մյուս մասնակիցների անտարբեր վերաբերմունք
- Որոշումների միանձնյա կայացում
- Անկանխատեսելի իրավիճակներ

## Արտաքին դրական գործոններ

1. ՀՀ կառավարության կողմից առաջարկվող կրթության քաղաքականության իրականացման նոր մոդելների ներդրում
2. Երևանի քաղաքապետարանի և Աջափնյակ վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանումների աջակցությունը դպրոցի կարիքների բավարարման և կրթական գործընթացների իրականացման, կառավարման, համագործակցության հարցերում
3. Մասնակցություն կրթական ծրագրեր իրականացնող տարբեր կազմակերպությունների հայտարարած դրամաշնորհներին և ծրագրերին
4. Պետական ֆինանսավորման աճ:

## Արտաքին բացասական գործոններ

1. Արտակարգ իրավիճակով պայմանավորված գործոններ
2. Պետական ֆինանսավորման ոչ բավարար մեխանիզմներ
3. Համագործակցության պակաս
4. Դրամաշնորհային ծրագրերի բացակայություն




## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

| | |
|---|---|
| **Հաստատության անվանումը** | «Երևանի Լ.Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոց» ՊՈԱԿ |
| **Հասցեն** | ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան փող. 2-րդ նրբանցք |
| **Հարկերի թիվը** | 2 |
| **Շենքի տեսակը** | տիպային |
| **Մասնաշենքերի քանակը** | 7 |
| **Շենքի զբաղեցրած մակերեսը** | ***8349,29*** |
| **Հիմնադրման տարեթիվը** | 1973թ. |
| **Վերակազմավորման տարեթիվը** | 2007թ. |
| **Ելքերի քանակը** | 6, 3 հիմնական, 3 պահեստային |
| **Նախագծային հզորությունը (աշակերտ)** | 1460 |
| **Աշխատանքային ռեժիմը** | Հնգօրյա, երկհերթ |
| **Կազմակերպաիրավաբանական ձևը** | ՊՈԱԿ |
| **Սովորողների թիվը** | 1598(2022-2023 ուսումնական տարվա տվյալներ) |
| **Աշխատակիցների ընդհանուր թիվը** | 111 |
| **Պաշտոնական կայք** | https://www.school155.schools.am |
| **Սոցիալական հարթակ** | https://www.facebook.com/profile.php?id=100007035725280&mibextid=ZbWKwL |

Երևանի հ.155 դպրոցը հիմնադրվել է 1973 թ. նորակառույց Աջափնյակ թաղամասում և մինչև 2007թ. գործել է որպես միջնակարգ կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն: 2007թ. դպրոցը վերակազմավորվել է որպես հիմնական դպրոց: ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2007 թ. ապրիլի 28-ին հրամանով դպրոցին տրվել է տարրական ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթություն իրականացնելու լիցենզիա:

2009թ. դպրոցն անվանակոչվել է անվանի գրող հրապարակախոս Լ.Միրիջանյանի անվամբ: Դպրոցում աշխատանքներ են տարվում հանրակրթության հիմնական նպատակների իրագործման ուղղությամբ, այն է՝ սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացում, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորում, մասնագիտական կողմնորոշում, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստում:

Դպրոցում ուսուցանվում է երեք օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն: Երկարօրյա ուսուցման խմբերի թիվը երկուսն է: Գործում են «Ստեղծարար մտածողության», «ՀԵՊ օլիմպիական», «Մայրենիի խորհրդավոր աշխարհում», «Գրական ակումբ», «Գլորիա» երաժշտական, «Բադմինթոն», «Օտար լեզվի օլիմպիական» արտադասարանական խմբակները, որոնք մեծ դերակատարում ունեն սովորողների գիտելիքների ամրապնդման, հմտությունների, դիրքորոշումների և արժեքային համակարգի ձևավորման գործում: Վերջիններս՝ որպես հանրակրթության բովանդակության բաղադրիչներ, սահմանված են հանրակրթության պետական չափորոշչով: 2018-2023թթ դպրոցում պայմաններ են ստեղծվել «Արմաթ» ինժեներական, կենսաքիմիայի, ֆիզիկայի, տեխնոլոգիայի լաբորատորիաների, շախմատի կաբինետի և էլեկտրոնային հրաձգարանի գործունեության համար:

Դպրոցն աշխատում է առաջին ու միջին հերթով՝ հնգօրյա աշխատանքային շաբաթով: Վերջին հինգ տարիների ընթացքում զգալիորեն բարելավվել է դպրոցի նյութատեխնիկական բազան, ուսումնական միջավայրը ավելի անվտանգ ու հրապուրիչ է դարձել ոչ միայն սովորողների, այլև բոլոր շահառուների համար: Մշտապես դպրոցի ղեկավար անձնակազմի և մանկավարժական համակազմի ուշադրության կենտրոնում են եղել մասնագիտական կատարելագործման, տարբեր կրթական կառույցների հետ համագործակցության, կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքները, ինչի շնորհիվ բարձրացել է դպրոցի հեղինակությունը: Մասնագիտական բարձր որակ ունեցող ուսուցիչները ներգրավված են հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների պարտադիր ատեստավորման դասընթացներ իրականացնող դասախոսական կազմում, ինչպես նաև դասագրքաստեղծ խմբերի աշխատանքներում: ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով դպրոցը հանդիսանում է այդ դասընթացների վերապատրաստման կենտրոն: Դպրոցն իր գործունեության ուղղությունների ծավալմամբ դարձել է ռեսուրս-կենտրոն կրթության գործընթացի մասնակիցների համար: Ծնողական համալսարանի գործունեությունը մեծապես նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշման, ծնող-դպրոց, սովորող – ծնող հարաբերություններում բացահայտված խնդիրների լուծման և տեղեկատվության ապահովման գործընթացներին: Ստորև ներկայացված է դպրոցի կառուցվածքը.




Գծապատկեր 1

Հաստատությունն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն, պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությամբ սահմանված նպատակներին և գործառույթներին համապատասխան: Ըստ կանոնադրության՝ դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է: Գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:



# ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցն ունի յոթ մասնաշենք, գրադարան, մարզադահլիճ, մարզահրապարակ, բուժկետ, բուֆետ, հանդիսությունների սրահ և այլն: Ստորև ներկայացված է ուսումնական և օժանդակ տարածքների վերաբերյալ տեղեկությունը:

| Անվանումը | Քանակը | Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր) |
|---|---|---|
| Դասասենյակ | 28 | |
| | 21 | 54 |
| | 1 | 60 |
| | 6 | 36 |
| Փոքր խմբերի համար նախատեսված դասասենյակներ | 4 | 18 |
| Լաբորատորիա | 2 | |
| | Կենսաքիմիա | 65 |
| | «Արմաթ» ինժեներական լաբորատորիա | 36 |
| Առարկայական կաբինետ | Շախմատ | 45 |
| | ՆԶՊ | 27 |
| | Տեխնոլոգիա | 18 |
| Արհեստանոց | 1 | 9 |
| Մարզադահլիճ | 2 | |
| | 1 | 216 |
| | 1 | 108 |
| Գրադարան-ընթերցասրահ | 1 | 90 |
| Համակարգչային սենյակ | 1 | 72 |
| Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) | 3 | |
| | 1 (մարզահրապարակ) | 960 |
| | 1 (մարզահրապարակ) | 405 |
| | 1 (պահեստ) | 18 |
| Այլ նշանակության | 7 | |
| | 1 | 45 |
| | 1 | 60 |
| | 3 | 16 |
| | 2 | 12 |

Դպրոցը ջեռուցվում է և ապահովված է ջրամատակարարմամբ: Պետբյուջեից հատկացված ֆինանսական միջոցների խնայողությունների հաշվին յուրաքանչյուր տարի իրականացվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Պարբերաբար համալրվել է ուսումնական գույքը: Այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները հետագայում ևս կրելու են շարունակական բնույթ:

## ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

| ՈԼՈՐՏԸ | ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ |
|---|---|---|
| Շենքային պայմանները | Յուրաքանչյուր տարի դպրոցի ֆիանսական խնայողությունների հաշվին վերանորոգվել են դասասենյակները :<br>2018-2023թթ ընթացքում վերանորոգվել են դպրոցի բոլոր դասասենյակները | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել և կահավորվել է գրադարանը, ներդրվել է ավտոմատացման և թվայնացման համակարգ:<br>Պայմաններ են ստեղծվել շահառուների համար նախատեսված ռեսուրս-կենտրոնի գործունեության համար | Պետական բյուջե |
| | Պայմաններ են ստեղծվել է «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի գործունեության համար:<br>Լաբորատորիան վերազինվել է համապատասխան գույքով, 8 համակարգչով, 1 CNC շաղափային լազերային հաստոցով, 1 եռաչափ տպիչով, 1 էլեկտրոնային գրատախտակով: | Պետական բյուջե |
| | Ձևավորվել են կենսաքիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, կազմակերպվել է պայմանների բարելավում:<br>Լաբորատորիաներում առկա են էլեկտրոնային գրատախտակներ, լաբորատոր գույք, քարշիչ պահարան, լաբորատոր և գործնական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ նյութեր, դիդակտիկ պարագաներ և սարքավորումներ: | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել և արդիականացվել է դպրոցի նախամուտքը: | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել է նկուղային 400 քմ տարածքը, որը կարող է ծառայել որպես ապաստարան: | Պետական բյուջե |
| | Էլեկտրոնային հրաձգարանի և տեխնոլոգիայի կաբինետների ստեղծման նպատակով վերանորոգվել են նկուղային հարկում տրամադրված տարածքները | Պետական բյուջե |

| | | |
|---|---|---|
| | Ուսումնական հաստատության տարածքի մետաղական ցանկապատը վերականգնվել է, որն ավելի անվտանգ է դարձրել սովորողների տեղաշարժը: | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել են դպրոցի 12 սանհանգույցները: | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել և կահավորվել է համակարգչային կաբինետը, այն վերազինվել է նոր սերնդի 18 համակարգիչներով: | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել և կահավորվել են մարզադահլիճը, հանդիսությունների սրահը և մարզահրապարակը: | Պետական բյուջե |
| Նյութատեխնիկական բազայի համալրում | Դասասենյակները, գրադարանը և ուսումնական տարածքները համալրվել են նոր գույքով, ուսումնադիդակտիկ պարագաներով, ՏՀՏ միջոցներով: | Պետական բյուջե |
| | Դպրոցը ձեռք է բերել 32 նոր համակարգիչ, էլեկտրոնային 7 գրատախտակ, 4 տպիչ և 3 դյուրակիր համակարգիչ: | Պետական բյուջե |
| | Լաբորատորիաները համալրվել են անհրաժեշտ նյութերով, ապահովված են մշտական ջրամատակարարմամբ, պայմաններ են ստեղծվել անվտանգության պայմանների ապահովման համար: | Պետական բյուջե |

Գրադարանը զբաղեցնում է 90քմ տարածք, վերջին տարիներին պայմաններ են ստեղծվել ընթերցասրահի համար, գրքային ֆոնդը (գեղարվեստական գրականություն և ուսումնական նյութեր) կազմում է 2280 կտոր գիրք: Գրադարանում տեղադրված է նոր սերնդի ինտերակտիվ հեղուկ բյուրեղային դիսփլեյ: Ընթերցասրահի պայմանների շարունակական բարելավումը հնարավորություն է ընձեռում սովորողներին և կրթական գործընթացի մյուս մասնակիցներին էլ ավելի արդյունավետ զբաղվելու ստեղծագործական և հետազոտական աշխատանքներով: Գրքային ֆոնդը պարբերաբար համալրվում է:

***«Ի՞նչ հաճախականությամբ ես օգտվում դպրոցում գործող գրադարանից»*** *հարցին սովորողների 23.7 %-ը պատասխանել է՝ ամեն շաբաթ կամ ավելի հաճախ, 43.2 %-ը՝ ամեն ամիս, իսկ 5.9%-ը նշել է՝ երբեք:* Ընդհանուր առմամբ, սովորողների՝ գրադարանից օգտվելը անուղղակի պայմանավորված է նաև աշակերտների առաջադիմության տվյալներով, աշակերտների մեծամասնությունը օգտվում է դպրոցի ուսումնական ռեսուրսներից, ինչը դրական ցուցանիշ է: Գծապատկեր 2-ում ներկայացված են հարցման արդյունքները.




Գծապատկեր 2

Գրադարանում ձևավորված տեղեկատվական ռեսուրս-կենտրոնի գործունեությունը նպաստել է ոչ միայն արդի պահանջներին համապատասխան շահառուների տեղեկատվական դաշտի ապահովմանը, այլև կարևոր միջավայր է հանդիսացել մասնագիտական զարգացման խնդիրների լուծման համար: Մանկավարժական աշխատողները, սովորողները և կրթական գործընթացի մյուս մասնակիցները հնարավորություն են ունենում օգտագործելու համացանցի ռեսուրսները, ստանալու դասերի պատրաստման և անցկացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:



Դպրոցում  գործում են ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ, էլեկտրոնային հրաձգարան, համակարգչային դասարան, տեխնոլոգիայի և այլ առարկաների կաբինետներ: Ուսումնանյութական բազայի համալրումն ու արդիականացումը կարևոր ռազմավարական ուղղություններից է: Այդ նպատակով անհրաժեշտ եմ համարում նյութատեխնիկական բազայի համալրումը ՏՀՏ նոր միջոցներով և ևս մեկ համակարգչային դասարան ունենալը:

Կրթության զարգացման ծրագրի առաջիկա տարիների ուղղություններից է ներառական կրթության կազմակերպումը հանրապետության բոլոր դպրոցներում: Դպրոցում ներկայումս սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող վեց աշակերտ: Ներառական կրթության  կազմակերպման լիարժեք պայմանների ապահովմանն ուղղված գործողությունների իրականացումը  ևս  ծրագրի կարևոր մաս է կազմում:

| **Ուժեղ կողմեր** | Թույլ կողմեր |
|---|---|
| ❖ Ֆինանսական միջոցների խնայողությունների հաշվին դպրոցի յոթ մասնաշենքերում և հարակից տարածքում պարբերաբար իրականացվում են ընթացիկ վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ:<br>❖ Դպրոցի մասնաշենքերի պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում են հակահրդեհային անվտանգության կանոնները:<br>❖ Դպրոցի տնօրենությունը հետամուտ է և հետևողական ուսումնական բարենպաստ պայմանների ստեղծման ուղղությամբ կատարվող աշխատանքների հարցում:<br>❖ Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար:<br>❖ Վերանորոգված և համապատասխան գույքով համալրված դասասենյակների առկայություն<br>❖ Համապատասխան գույքով և սարքավորումներով ապահովված լաբորատորիաների առկայություն | ❖ Ուսումնական տարածքների ընթացիկ վերանորոգումների իրականացման անհրաժեշտություն (յուրաքանչյուր տարի՝ մոտ 30%-ը ):<br>❖ Նյութատեխնիկական բազան մշտապես հարստացնելու անհրաժեշտություն (յուրաքանչյուր տարի՝ առնվազն 20%-ով):<br>❖ Դասասենյակներն ու կաբինետները ՏՀՏ նոր սարքավորումներով համալրելու միջոցների բացակայություն:<br>❖ Ինֆորմատիկայի երկրորդ կաբինետ ունենալու համար տարածքի անհրաժետություն:<br>❖ Սննդի կետի՝ բուֆետի տեղերի քանակի սահմանափակ լինելը (ներկայումս տեղերի թիվը 50 է):<br>❖ Ուսումնադիդակտիկ պարագաների պարբերաբար համալրման անհրաժեշտություն:<br>❖ Ներառական կրթության իրականացման լիարժեք պայմանների բացակայություն (ներկայումս դպրոցը իրականացնում է ներառական կրթություն վեց սովորողի համար): |

| | |
|---|---|
| ❖ Համակարգիչներով ապահովված ինֆորմատիկայի կաբինետի առկայություն:<br>❖ «Տեխնոլոգիա» առարկայի 2 լաբորատորիաների առկայություն:<br>❖ Վերանորոգված մարզադահլիճների, հանդիսություն-ների սրահի, մարզահրապարակի առկայություն:<br>❖ Վերանորոգված սանհանգույցների առկայություն:<br>❖ Սանիտարահիգիենիկ պայմաններին համապատաս-խանող սննդի կետի առկայություն:<br>❖ Բուժկետի առկայություն, որն ապահովված է առա-ջին բուժօգնություն տրամադրելու պայմաններով և միջոցներով:<br>❖ Դպրոցի շենքը ջեռուցվում է լոկալ ջեռուցման հա-մակարգով:<br>❖ Դպրոցն ապահոված է ժամանակակից տեխնոլո-գիաներով (համակարգիչներ, այդ թվում՝ դյուրակիր, էլեկտրոնային գրատախտակներ, պրոյեկտորներ և այլն):<br>❖ Դպրոցում պայմաններ են ստեղծվել «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի գործունեության համար:<br>❖ Դպրոցի 400 քմ նկուղային տարածքը բարեկարգվել ու կահավորվել է և կարող է ծառայել որպես ապաստարան:<br>❖ Դպրոցում ստեղծվել են համապատասխան պայման-ներ էլեկտրոնային հրաձգարանի գործունեության համար:<br>❖ Գրադարանի պայմանների բարելավմանը զուգըն-թաց՝ ներդրվել են թվայնացման ծրագրեր: | ❖ Նկուղային հատվածի մի մասի վերանորոգման ան-հրաժեշտություն<br>❖ Դպրոցի կցակառույցի անհրաժեշտություն, որը կնպաստի մեկ հերթով դասապրոցեսի կազմակերպ-մանը:<br>❖ Դպրոցի բակային տարածքի բարեկարգման անհրա-ժեշտություն:<br>❖ Նախասրահի վերանորոգման և կահավորման անհրաժեշտություն: |

**Նպատակ**

Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի համապատասխանեցում արդի պահանջներին:

**Խնդիրներ՝**
1.Դպրոցի շենքային պայմանների բարելավում
2. Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում և արդիականացում

**Ռիսկեր**

- Ֆինանսական անբավարար միջոցներ
- Ֆինանսավորման կարգի/բանաձևի/ փոփոխություն
- Վճարովի կրթական ծառայությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու անհնարինություն
- Տարբեր կազմակերպությունների ու գերատեսչությունների հետ համագործակցության պակաս
- Կրթության գործընթացների մասնակիցների շրջանում դպրոցի գործունեության ուղղությունների մասին տեղեկատվության պակաս

**Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Հետևողական աշխատանք տանել բյուջետային հատկացումներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ
- Սովորողների և ծնողական համայնքի շրջանում պարբերաբար ճշտել վճարովի կրթական ծառայությունների կազմակերպման կարիքները և արդյունքների հիման վրա մշակել ծրագրեր:
- Դպրոցի գործունեության կանոնադրական ուղղությունների ներկայացում և լուսաբանում դպրոցի կայքէջում, աշակերտական և ծնողական ժողովների ընթացքում, սոցիալական ցանցերում
  - Դպրոցի կայքէջում ստեղծել «Օգնիր դպրոցին» բաժին:

| Միջոցառումներ գործողություններ | Արդյունքների գնահատման չափանիշ | Պատասխանատու | Ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ | Ֆինանսական միջոցներ | Վերահսկողության մեխանիզմներ |
|---|---|---|---|---|---|---|
| Դասենյակների, առարկայական կաբինետների, լաբորատորիանե-րի և մյուս տա-րածքների ընթա-ցիկ վերանորո-գումների իրակա- | Տարեկան առնվազն 8- 10 դասասենյակնե-րի վերանորո-գում, առնվազն 1 ուսումնական լաբորատորիայի բարեկարգում | Տնօրեն, վարչա-տնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թթ. | Վերանորոգում իրականաց-նելու համար անհրաժեշտ նյութեր | Պետական բյուջե, ֆինանսական խը-նայված միջոցներ, վճարովի ծառա-յություններից առաջացած միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, ներքին գնահատ-ման և ֆինան-սական հաշվետ-վություններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| նացում՝ ըստ անհրաժեշտության | | | | | | |
| Դպրոցի բուֆետի պայմանների ընդլայնում | Սննդի կետից օգտվողների թվի, տեղերի քանակի ավելացում (միաժամանակ օգտվողներ՝ 150 հոգի) | Վարչատնտեսական համակարգող | 2024թ. | Շինարարական անհրաժեշտ նյութեր և համապատասխան գույք | Պետբյուջեով տրամադրված միջոցներ, խնայողությունների, լրացուցիչ վճարովի ծառայությունների կազմակերպումից առաջացած միջոցներ: | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներքին գնահատման, ֆինանսական հաշվետվություններ: |
| Նկուղային հարկի տարածքի մնացած հատվածի վերանորոգում | Ապաստարանի՝ 380 քմ տարածքի լիարժեք վերանորոգում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2025-2026թթ. | Վերանորոգման անհրաժեշտ շինանյութ և այլ միջոցներ, | Պետբյուջեով տրամադրված միջոցներ, խնայողությունների հաշվին | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |
| «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման լիարժեք պայմանների ապահովում | «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման բարելավված պայմանների առկայություն /առնվազն 2 հաստոցի, 3-4 կարի մեքենայի ձեռքբերում/, սովո- | Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող, համապատասխան մեթոդմիավորում, «Տեխնոլոգիա» դասավանդող ուսուցիչներ, տնտեսական գործառույթներ | 2025-2026թթ. | Վերանորոգման համար անհրաժեշտ միջոցներ, հաստոցներ, ուսումնադիդակտիկ այլ պարագաներ | Պետբյուջեով տրամադրված միջոցներ, խնայողությունների հաշվին | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | րողների հմտու-թյունների ձևա-վորման լիարժեք միջավայրի առ-կայություն | իրականացնող աշխատակազմ | | | | |
| Ներառական կրթության լիարժեք կազմա-կերպման համար անհրաժեշտ պայ-մանների ստեղ-ծում | Կրթության ա-ռանձնահատուկ կարիք ունեցող սովորողների կրթության կազ-մակերպման լի-արժեք պայման-ների առկայութ-յուն (համապա-տասխան տեխ-նիկական միջոց-ների և առ-նվազն 1 հարմա-րեցված սան-հանգույցի առ-կայություն): | Տնօրենություն, վարչատնտեսա-կան համակար-գող, համապա-տասխան մեթոդ-միավորում, բազ-մամասնագիտա-կան խումբ, տըն-տեսական գործա-ռույթներ իրակա-նացնող աշ-խատակազմ | 2023-2024 ուստարի | Վերանորոգման համար անհրա-ժեշտ նյութեր, սովորողների կարիքներին համապատաս-խան տեխնի-կական միջոց-ներ, դիդակտիկ նյութեր | Պետական բյուջեի խնայողություններ | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, ներ-քին գնահատման և ֆինանսական հաշ-վետվություններ: |
| Ինֆորմատիկայի երկրորդ կաբինե-տի գործունեութ-յան պայմանների ստեղծում | Առնվազն 12-15 համակարգիչնե-րի, 1 էլեկտրո-նային գրատախ-տակի, աշակեր-տական գույքի առկայություն/ ՏՀՏ միջոցների արդյունավետ | Տնօրեն, վարչա-տնտեսական հա-մակարգող, հա-մապատասխան մեթոդմիավորում, «Ինֆորմատիկա» առարկայի ուսու-ցիչ, էլեկտրոնային կառավարման և | 2025թ. | Համակարգիչ-ներ, էլեկտրո-նային գրատա-խտակ, պրոյե-կտոր, համա-պատասխան գույք | Պետական բյուջեի խնայողություններ և լրացուցիչ վճա-րովի ծառայութ-յուններից առա-ջացած միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, ներ-քին գնահատման և ֆինանսական հաշ-վետվություններ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | օգտագործում, սովորողների ՏՀՏ և մեդիա կարողունակություն-ների զարգացում | դասավանդման ապահովման մասնագետ, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | | | | |
| Դպրոցի գույքի համալրում | Առնվազն 2-3 դասասենյակի կահավորում /ձեռք բերել 60-90 հատ աշակերտական սեղան-աթոռ, 2-3 գրապահարաններ, ուսուցչի սեղաններ և գրատախտակներ/ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թթ Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | Սեղան, նստարաններ, պահարաններ, գրատախտակներ և այլն | Պետբյուջեի խնայված ֆինանսական միջոցների հաշվին, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |
| ՏՀՏ նոր միջոցների ձեռքբերում | Սարքավորումների արդիականացում /ձեռք բերել առնվազն 3-4 համակարգիչ և 1 էլեկտրոնային գրատախտակ/ | Վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թթ Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | Նոր սերնդի համակարգիչներ, այդ թվում՝ դյուրակիր, էլեկտրոնային գրատախտակներ, պրոյեկտորներ և այլն | Պետական բյուջեի հատկացրած միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնադիդակտիկ պարագաների համալրում, լաբորատոր սարքավորումների և անհրաժեշտ նյութերի ձեռքբերում | Ուսումնական գործընթացի արդիականացում | Տնօրեն, Վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թթ | Տարբեր առարկաների դասավանդման նյութեր | Պետական բյուջեից հատկացված և այլ, այդ թվում՝ ցուցահանդեսվաճառքներից առաջացած միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |
| Դպրոցի նախասրահի բարեկարգում և կահավորում | 100քմ բարեկարգված և հարմարավետ տարածքի առկայություն | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023թ. | Վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր, համապատասխան գույք | Պետբյուջե և ցուցահանդես վաճառքից առաջացած միջոց (գույքի ձեռքբերում) | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |
| Հարց բարձրացնել լիազոր մարմնի առջև՝ հաստատության շենքային պայմանների ընդլայնման անհրաժեշտության և կցակառույց ունենալու առաջարկով: | Կից կառույցի առկայություն /1.300քմ մակերեսով բարեկարգ տարածք, 2-3 դասասենյակների առկայություն, ուսումնական գործընթացի կազմակերպում մեկհերթյա աշխատակարգով, | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2025-2026թթ. | Հաստատված նախագծային փաստաթղթեր, անհրաժեշտ շինարարական միջոցներ, գույք | Պետական բյուջե Դոնոր կազմակերպություններ, հովանավորներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2. 150 քմ մակերես ունեցող երկրորդ մարզադահլիճի առկայություն/ | | | | | |



# ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հաստատության գործունեությունը իրականացվում է կառավարման և խորհրդակցական մարմինների փոխադարձ վստահության պայմանների և մասնակցային մշակույթի շարունակական բարելավման սկզբունքների հենքի վրա:

Հաստատությունում որոշումները կայացվում են համագործակցության արդյունքում, առանձին իրավիճակների կամ խնդիրների քննարկման ժամանակ ապահովվում է բոլոր կողմերի մասնակցությունն ու նրանց դիրքորոշումների ներկայացումը: Կրթության գործընթացի մասնակիցները ներգրավված են դպրոցի զարգացման ոլորտների վերաբերյալ առաջարկություններ և դիտարկումներ ներկայացնելու գործընթացներում (դպրոցի առաքելության և նպատակների սահմանում, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում, տարեկան բյուջեի նախահաշվի կազմում, ներդպրոցական վերահսկողության պլանավորում, դպրոցի ներքին գնահատման իրականացում և այլն):

Հանրակրթության մասին ՀՀ օրենքում ամրագրված է.

1. Պետական ուսումնական հաստատության կառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով և պետական ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Պետական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը:

4. Պետական ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգումն ու մեթոդական ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

## Հաստատության խորհուրդ

Որպես կառավարման կոլեգիալ մարմին՝ գործում է 2006թ-ից: Խորհրդի անդամները ըստ խորհրդի ձևավորման կարգի ընտրվում են երեք տարի ժամկետով: Ներկայումս խորհուրդը բաղկացած է ինը անդամից, անվանական կազմը Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատվել է 2021թ.:

Հաստատության ուսումնադաստիարակչական գործունեությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով գործում են հետևյալ խորհրդակցական մարմինները.




Գծապատկեր 3

Կառավարման և խորհրդակցական մարմինները իրենց գործունեությունը իրականացնում են Հանրակրթության մասին ՀՀ օրենքի և հաստատության կանոնադրության մեջ ամրագրված համապատասխան գործառույթների շրջանակում: Դպրոցում գործում է հարակից առարկաների ուսուցիչների 7 մեթոդմիավորում: Դրանց գործառույթների շրջանակում հաճախ են կազմակերպվում ուսումնադաստիարակչական գործընթացների, ուսուցման և ուսումնառության, կրթության որակի բարելավմանն ուղղված քննարկումներ, սեմինարներ, մանկավարժական ընթերցումներ, փորձի փոխանակման միջոցառումներ: Դպրոցի տնօրենի համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ նպաստել է դպրոցի կառավարման և ուսումնադաստիարակչական գործունեության բարելավմանը, դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծման հարցերում թիմային-մասնակցային մշակույթի և փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը, կրթության գործընթացի մասնակիցների պատասխանատվության բարձրացմանը: Կառավարման և խորհրդակցական մարմինների ներկայացուցիչները իրենց մասնակցությունն են ունենում նաև դպրոցի յուրաքանչյուր ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունների կազման նպատակով ձևավորված գնահատման հանձնաժողովի կազմում՝ դրանով իսկ ապահովելով կրթական գործընթացի մասնակիցների աջակցությունը դպրոցի առկա վիճակի վերլուծության և ծառացած խնդիրների լուծման առաջնահերթությունների որոշման գործում: Դպրոցի տնօրենը հետևողական աշխատանք է տանում դպրոցի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը ապահովելու, կառավարման ժողովրդավարական մեթոդների կիրառման և որոշումների ընդունման ոլորտում մասնակցային մոտեցումների մշակույթի ձևավորման

ուղղությամբ: Տնօրենի և կառավարման խորհրդի համագործակցությունը հենված է նշված մոտեցումները գործնականում կիրառելու հմտությունների բարելավման սկզբունքների վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի տնօրենի և հաստատության խորհրդի համագործակցության շնորհիվ իրականացվել են դպրոցի կանոնադրության մեջ ամրագրված, խորհրդի լիազորություններով պայմանավորված բոլոր գործառույթները: Տնօրենն ապահովել է համապատասխան պայմաններ կառավարման խորհրդի աշխատանքների բնականոն գործունեության համար: Առնվազն երեք ամիսը մեկ անգամ գումարվել են խորհրդի նիստեր, քննարկվել են օրակարգային հարցեր: Անհրաժեշտության դեպքում տնօրենի նախաձեռնությամբ հրավիրվել են նաև արտահերթ նիստեր:

Հաշվետու ժամանակաշրջանում խորհուրդը՝

- Վերահսկողություն է իրականացրել տնօրենի գործունեության և զարգացման ծրագրի կատարման նկատմամբ, անհրաժեշտության դեպքում ներկայացրել առաջարկություններ:
- Մասնակցել է դպրոցի յուրաքանչյուր տարվա ներքին գնահատման, աշխատանքների իրականացման, հաշվետվությունների կազմման աշխատանքներին:
- Տնօրենի ներկայացմամբ քննարկել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը ֆինանսական տարվա բյուջեի նախահաշվի տարիֆիկացիայի, հաստիքացուցակի նախագծերը, դպրոցի ֆինանսատնտեսական, ներքին գնահատման հաշվետվությունները, հաստատել է դպրոցի ներքին կարգապահական կանոնները և այլն:

Տնօրենի կողմից ղեկավարման ժողովրդավարական ոճի կիրառման արդյունքում ամրապնդվել և ավելի բարձր հիմքերի վրա է դրվել նաև համագործակցությունը խորհրդակցական մարմինների հետ:

## Մանկավարժական խորհուրդ

Ըստ դպրոցի կանոնադրության՝ մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները: Յուրաքանչյուր ուսումնական տարին սկսելուց առաջ՝ օգոստոս ամսվա մանկավարժական խորհրդի առաջին նիստում, ձևավորվել է մանկավարժական խորհրդի կազմը և հաստատվել տնօրենի կողմից: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի այն նիստերին, որի ընթացքում քննարկվել են սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցեր, խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվել են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ: Մանկավարժական խորհրդի կողմից երկու ներկայացուցիչ ընդգրկված է հաստատության կառավարման խորհրդի կազմում: Դպրոցի կանոնադրությամբ ամրագրված գործառույթների շրջանակում մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվել են ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, խմբակների, երկարօրյա

խմբերի և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման, հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և այլ գործառույթերի հետ կապված հարցեր, ընդունվել են համապատասխան որոշումներ:

## Մեթոդմիավորումներ

Դպրոցի առարկայական մեթոդական միավորումները ձևավորվել են նույն կամ հարակից առարկաների ուսուցչական համակազմի անդամներից: Ներկայումս գործող 7 մեթոդմիավորումների աշխատանքներում ընդգրկված են հաստատության բոլոր ուսուցիչները: Մեթոդմիավորումների գործառույթները, որոնք ամրագրված են դպրոցի կանոնադրության մեջ, ուղղված են մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի, նոր փորձարկվող դասագրքերի, մեթոդական ձեռնարկների վերաբերյալ քննարկումների կազմակերպմանը և ուսուցիչներին համապատասխան երաշխավորություններ տալու, նրանց մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը, փորձի փոխանակմանը նպաստելու, մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ կազմակերպելու և այլ հարցերի իրականացմանը:

## Ծնողական խորհուրդ

Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

2022-2023 ուսումնական տարում դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Դպրոցի ծնողական խորհուրդը ներկայումս բաղկացած է 54 անդամից:

Ծնողական խորհրդի երկու անդամ առաջադրվել կառավարման խորհրդի կազմում: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

Ծնողական համայնքի հետ կապի ամրապնդման և ավելի արդյունավետ համագործակցություն ապահովելու, ծնողներին՝ որպես կրթական գործընթացի մասնակից, դպրոցի աշխատանքներում ակտիվ ներգրավման նպատակով ստեղծվել է «Ծնողական համալսարան» խորհրդատվական կենտրոնը, որի գործունեության շրջանակում պարբերաբար կազմակերպվում են սովորողների տարիքային զարգացման և հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ մասնագիտական քննարկումներ տվյալ ոլորտի մասնագետների՝ մանկավարժների, հոգեբանների մասնակցությամբ:

Ծնողական խորհուրդը իր մասնակցությունն է ունեցել դասարանական և համադպրոցական միջոցառումների կազմակերպմանը, աջակցել դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում. ծնողներին ներգրավել սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, մասնակցել դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունների կազմման նպատակով ձևավորված հանձնաժողովի աշխատանքների իրականացմանը և հաշվետվությունների կազմմանը, ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին և այլն: Տնօրենի կողմից մշտապես խրախուսվել է կառավարման և խորհրդակցային մարմինների հետ համագործակցությունը:

## Աշակերտական խորհուրդ

Հաստատությունում մասնակցային մշակույթի ձևավորման գործում կարևոր դերակատարում ունի աշակերտական խորհուրդը, որի կազմում ընդգրկված է 92 աշակերտ: Դպրոցի գործունեության պլանավորման ընթացքում ևս կարևորվել է աշակերտական խորհրդի դերը: Վերջինիս կողմից արված առաջարկները ներառվել են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման ուղղություններում: Մանկավարժական խորհրդի՝ աշակերտների վերաբերվող հարցերի քննարկմանը մասնակցել են նաև աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ: Ներքին գնահատման հաշվետվությունների կազմման ընթացքում աշակերտական խորհրդի կողմից իրականացվել են հարցումներ աշակերտների շրջանում, որի արդյունքների վերլուծությունը հիմք է հանդիսացել դպրոցի գործունեության ոլորտների պլանավորման համար:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| - Կառավարման խորհրդի կանոնակարգված գործունեություն<br>- Ակտիվ մասնակցություն դպրոցի կառավարման գործընթացներին<br>- Մանկավարժական խորհրդի գործառույթների շրջանակներում իրականացվող լիազորությունների հստակ ընկալում<br>- Մանկավարժական խորհրդի իրավասությունների հստակ ընկալում | - Դպրոցի պաշտոնական կայքէջում հետադարձ կապի բացակայություն<br>- Դպրոցի պաշտոնական կայքէջում, ծնողների և մյուս շահառուների համար խորհրդատվական բաժնի բացակայություն<br>- Աշակերտական խորհրդի կողմից սեփական նախաձեռնությունների մոտիվացիայի պակաս<br>- Տարբեր խորհրդակցական մարմինների համագործակցության պակաս |

| | |
|---|---|
| - Կրթության բարելավման նպատակով մեթոդմիավո-րումների կանոնակարգված գործունեություն<br>- Մեթոդմիավորումների ներուժի լիարժեք օգտագործում<br>- Ծնողական համալսարանի գործունեության ծավալում<br>- Հաշվետվողական և տեղեկատվության առկայություն շահառուների համար (հանդիպումներ, ժողովներ, քննարկումներ, հարցախույզերի և տարբեր միջոցառումների կազմակերպում, դպրոցիկայք էջի նյութերի վերանայում, թարմացում և այլն)<br>- Ծնողների հետ ամենօրյա կապի առկայություն<br>- Աշակերտական խորհրդի կանոնակարգված գործունություն | - Նույն կրթական ծրագրեր իրականացնող հարակից դպրոցների հետ միացյալ մեթոդմիավորումների գործունեության բացակայություն<br>- Կառավարման խորհրդի անդամների հաճախակի փոփոխություն<br>- Աշակերտների կողմից ներքին իրավական ակտերի պահանջների և բարեվարքության կանոնների ոչ լիարժեք կիրառում<br>- Դպրոցի շրջանավարտների հետ համագործակցության պակաս: |

| Նպատակ |
| --- |
| Մասնակցային մոտեցումների հենքի վրա կառավարման արդյունավետության բարձրացում, կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության բարելավում |
| **Խնդիրներ** |
| 1. Կառավարման  մարմնի գործունեությունը դարձնել առավել մասնակցային: 2. Ապահովել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև: 3. Խրախուսել խորհրդակցական մարմիների նախաձեռնությունները: 4. Զարգացնել խորհրդակցական մարմինների կարողություններն ու հմտությունները: 5. Մասնագիտական կողմնորոշման և դպրոցին ֆինանսական օժանդակության հարցերում շրջանավարտերի հետ համագործակցության խթանում: |
| **Ռիսկերը** |
| 1. Մոտիվացիայի պակաս 2. Դպրոցի գործունեության ոչ լիարժեք  լուսաբանում 3. Համագործակցության պատրաստակամության բացակայություն 4. Անբավարար ֆինանսական միջոցներ |
| **Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ** |
| 1. Հանդիպումների, քննարկումների կազմակերպում 2. Տարբեր մրցույթների կազմակերպում 3. Դպրոցի կայքէջում «Հետադարձ կապ» բաժնի ներդրում, դպրոցի գործունեության ներկայացում տարբեր հարթակներում: 4. Լրացուցիչ ֆինանասական միջոցների ներդրում: |

| Միջոցառումներ գործողություններ | Արդյունքների գնահատման չափանիշ | Պատասխանատու | Ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ | Ֆինանսական միջոցներ | Վերահսկողության մեխանիզմներ |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| Դասենյակների, առարկայական կաբինետների, լաբորատորիանե- | Տարեկան առնվազն 8- 10 դասասենյակնե-րի վերանորո- | Տնօրեն, վարչա-տնտեսական համակարգող, տնտեսական | 2023-2028թթ. | Վերանորոգում իրականաց-նելու համար | Պետական բյուջե, ֆինանսական խը-նայված միջոցներ, | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| րի և մյուս տա-րածքների ընթա-ցիկ վերանորո-գումների իրակա-նացում՝ ըստ ան-հրաժեշտության | գում, առնվազն 1 ուսումնական լաբորատորիայի բարեկարգում | գործառույթներ իրականացնող աշխատակազմ | | անհրաժեշտ նյութեր | վճարովի ծառա-յություններից առաջացած միջոցներ | ներքին գնահատ-ման և ֆինան-սական հաշվետ-վություններ |
| Դպրոցի բուֆետի պայմանների ընդլայնում | Սննդի կետից օգտվողների թվի, տեղերի քանակի ավե-լացում (միաժա-մանակ օգտ-վողներ՝ 150 հոգի) | Վարչատնտեսա-կան համակար-գող | 2024թ. | Շինարարական անհրաժեշտ նյութեր և հա-մապատաս-խան գույք | Պետբյուջեով տրամադրված մի-ջոցներ, խնայո-ղությունների, լրացուցիչ վճարո-վի ծառա-յություն-ների կազ-մակեր-պումից առաջա-ցած միջոցներ: | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների և ներքին գնահատման, ֆինանսական հաշ-վետվություններ: |
| Նկուղային հարկի տարածքի մնա-ցած հատվածի վերանորոգում | Ապաստարանի՝ 380 քմ տարածքի լիարժեք վերա-նորոգում | Տնօրեն, վարչա-տնտեսական համակարգող | 2025-2026թթ. | Վերանորոգ-ման անհրա-ժեշտ շինա-նյութ և այլ միջոցներ, | Պետբյուջեով տրամադրված մի-ջոցներ, խնայո-ղությունների հաշվին | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, ներ-քին գնահատման և ֆինանսական հաշ-վետվություններ: |
| «Տեխնոլոգիա» ա-ռարկայի դասա-վանդման լիար-ժեք պայմանների ապահովում | «Տեխնոլոգիա» առարկայի դա-սավանդման բա-րելավված պայ-մանների առկա-յություն /առ-նվազն 2 հաս-տոցի, 3-4 կարի մեքենայի ձեռք-բերում/, սովո- | Տնօրենություն, վարչատնտեսա-կան համակար-գող, համապա-տասխան մեթոդ-միավորում, «Տեխ-նոլոգիա» դասա-վանդող ուսուցիչ-ներ, տնտեսական գործառույթներ | 2025-2026թթ. | Վերանորոգ-ման համար անհրաժեշտ միջոցներ, հաս-տոցներ, ու-սումնադիդակ-տիկ այլ պարա-գաներ | Պետբյուջեով տրամադրված միջոցներ, խնայո-ղությունների հաշվին | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, ներ-քին գնահատման և ֆինանսական հաշ-վետվություններ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | րողների հմտու-թյունների ձևա-վորման լիարժեք միջավայրի առ-կայություն | իրականացնող աշխատակազմ | | | | |
| Ներառական կրթության լիարժեք կազմա-կերպման համար անհրաժեշտ պայ-մանների ստեղ-ծում | Կրթության ա-ռանձնահատուկ կարիք ունեցող սովորողների կրթության կազ-մակերպման լի-արժեք պայման-ների առկայութ-յուն (համապա-տասխան տեխ-նիկական միջոց-ների և առ-նվազն 1 հարմա-րեցված սան-հանգույցի առ-կայություն): | Տնօրենություն, վարչատնտեսա-կան համակար-գող, համապա-տասխան մեթոդ-միավորում, բազ-մամասնագիտա-կան խումբ, տըն-տեսական գործա-ռույթներ իրակա-նացնող աշ-խատակազմ | 2023-2024 ուստարի | Վերանորոգման համար անհրա-ժեշտ նյութեր, սովորողների կարիքներին համապատաս-խան տեխնի-կական միջոց-ներ, դիդակտիկ նյութեր | Պետական բյուջեի խնայողություններ | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, ներ-քին գնահատման և ֆինանսական հաշ-վետվություններ: |
| Ինֆորմատիկայի երկրորդ կաբինե-տի գործունեութ-յան պայմանների ստեղծում | Առնվազն 12-15 համակարգիչնե-րի, 1 էլեկտրո-նային գրատախ-տակի, աշակեր-տական գույքի առկայություն/ ՏՀՏ միջոցների արդյունավետ օգտագործում, սովորողների ՏՀՏ | Տնօրեն, վարչա-տնտեսական հա-մակարգող, հա-մապատասխան մեթոդմիավորում, «Ինֆորմատիկա» առարկայի ուսու-ցիչ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, | 2025թ. | Համակարգիչ-ներ, էլեկտրո-նային գրատա-խտակ, պրոյե-կտոր, համա-պատասխան գույք | Պետական բյուջեի խնայողություններ և լրացուցիչ վճա-րովի ծառայութ-յուններից առա-ջացած միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների, ներ-քին գնահատման և ֆինանսական հաշ-վետվություններ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | և մեդիա կարողունակություն-ների զարգացում | տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | | | | |
| Դպրոցի գույքի համալրում | Առնվազն 2-3 դասասենյակի կահավորում /ձեռք բերել 60-90 հատ աշակերտական սեղան-աթոռ, 2-3 գրապահարաններ, ուսուցչի սեղաններ և գրատախտակներ/ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թթ Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | Սեղան, նստարաններ, պահարաններ, գրատախտակներ և այլն | Պետբյուջեի խնայված ֆինանսական միջոցների հաշվին, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |
| ՏՀՏ նոր միջոցների ձեռքբերում | Սարքավորումների արդիականացում /ձեռք բերել առնվազն 3-4 համակարգիչ և 1 էլեկտրոնային գրատախտակ/ | Վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թթ Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | Նոր սերնդի համակարգիչներ, այդ թվում՝ դյուրակիր, էլեկտրոնային գրատախտակներ, պրոյեկտորներ և այլն | Պետական բյուջեի հատկացրած միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |
| Ուսումնադիդակտիկ պարագաների համալրում, լաբորատոր սարքավորումների և անհրաժեշտ նյութերի ձեռքբերում | Ուսումնական գործընթացի արդիականացում | Տնօրեն, Վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թթ | Տարբեր առարկաների դասավանդման նյութեր | Պետական բյուջեից հատկացված և այլ, այդ թվում՝ ցուցահանդեսվաճառքներից առաջացած միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցի նախասրահի բարեկարգում և կահավորում | 100քմ բարեկարգված և հարմարավետ տարածքի առկայություն | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023թ. | Վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր, համապատասխան գույք | Պետբյուջե և ցուցահանդես վաճառքից առաջացած միջոց (գույքի ձեռքբերում) | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |
| Հարց բարձրացնել լիազոր մարմնի առջև՝ հաստատության շենքային պայմանների ընդլայնման անհրաժեշտության և կցակառույց ունենալու առաջարկով: | Կից կառույցի առկայություն /1․300քմ մակերեսով բարեկարգ տարածք, 2-3 դասասենյակների առկայություն, ուսումնական գործընթացի կազմակերպում մեկհերթյա աշխատակարգով, 2․150 քմ մակերես ունեցող երկրորդ մարզադահլիճի առկայություն/ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2025-2026թթ․ | Հաստատված նախագծային փաստաթղթեր, անհրաժեշտ շինարարական միջոցներ, գույք | Պետական բյուջե Դոնոր կազմակերպություններ, հովանավորներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ: |

Զարգացման ծրագրի կազմման ընթացքում դպրոցի ծնողական, մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ հանդիպումների ժամանակ նրանց կողմից ներկայացվել են մի շարք առաջարկներ, որոնք ներառվել են համապատասխան ոլորտը ներկայացնող գործողությունների շարքում:

1. Մարզադահլիճի վերանորոգում և կահավորում
2. Ուսումնական գործընթացի կազմակերպում մեկ հերթով
3. Օժտված երեխաների հետ տարվող արդյունավետ աշխատանքի կազմակերպում
4. Դպրոցի բակային հատվածի բարեկարգում:



# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ, ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ուսումնական աշխատանքների կազմակերպման, դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծման, առկա դժվարությունների հաղթահարման և կանխանշված նպատակների իրագործման համար կարևորվել է դպրոցի համակարգված աշխատանքը կրթության պետական կառավարման լիազոր մարմինների, վարչական շրջանի, ծնողական համայնքի, տարբեր շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման ուղղությամբ: Համատեղ քննարկումներն ու տարբեր միջոցառումներում ներգրավածության ապահովումը նպաստել են մասնակցային մշակույթի ձևավորմանը, դպրոցի հեղինակության բարձրացմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը: Այս տարիների ընթացքում դպրոցում ձևավորվել է համայնքային ակտիվ դպրոցին ներկայացվող պահանջներին համապատասխան միջավայր: 2019թ. դպրոցում գործում է ծնողական համալսարանը, որի գործունեության շրջանակներում ծնողական համայնքի համար կազմակերպվում են սեմինարներ, քննարկումներ, սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման սեմինարներ, խորհրդատվություններ: Ծնողների հետ հանդիպումներ են ունեցել հանրապետության կրթամշակութային և գիտության ոլորտի մասնագետներ, պաշտպանության համակարգի ներկայացուցիչներ՝ հոգեբաններ, բժիշկներ և այլն: Տարեկան առնվազն երկու անգամ ծնողական համայնքի ընդհանուր ժողովում տնօրենը հանդես է եկել հաշվետվությունների ներկայացմամբ, լսել առաջարկներ: Ծնողների շրջանում հաճախակի իրականացվող հարցումները թույլ են տվել բացահայտելու դպրոցի գործունեության տարբեր ոլորտներում առկա խնդիրները և պլանավորելու դպրոց-ծնող համագործակցության բարելավման ծրագրեր: Հաշվի առնելով ծնողական համայնքի պահանջարկը և սովորողների նախասիրությունները՝ դպրոցում կազմակերպվում է երկարօրյա ուսուցում, գործում են առարկայական 8 խմբակներ՝ «Ստեղծարար մտածողության», «Գրական ակումբ», «Մայրենիի խորհրդավոր աշխարհում», «ՀԵՊ օլիմպիական», Բադմինթոնի, «Գլորիա» երաժշտական, «Օտար լեզվի օլիմպիական», կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, սովորողների ժամանցին ուղղված ծրագրեր: Լինելով Աջափնյակ վարչական շրջանի՝ աշակերտների մեծ թվաքանակ և պահանջարկ ունեցող դպրոց՝ սերտ կապի մեջ ենք վարչական շրջանի աշխատակազմի հետ: Դպրոցն ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես վարչական շրջանի, այնպես էլ համաքաղաքային տարբեր միջոցառումներին, որոնցից են՝

- «Երևան-Էրեբունի» տոնակատարություն
- Համաքաղաքային շաբաթօրյակներ
- Համաքաղաքային ծառատունկ
- Սպորտային միջոցառումներ
- Ազգային և այլ տոներին նվիրված միջոցառումներ և այլն:

Լիազոր մարմնի և վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչները ևս հրավիրվում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային- հետազոտական աշխատանքներ համայնքի առանձնահատկությունների, կարիքների բացահայտման ուղղությամբ (էկոլոգիական, բնապահպանական և այլ): Այդ աշխատանքների մի մասը ներկայացվել է աշակերտական, հանրապետական գիտաժողովներում և արժանացել մրցանակների, մասնավորապես՝ ԵՊՀ-ի, ԿԶՆԱԿ-ի, ՀՀ ԿԳՄՍ-ի, ինչպես նաև գործընկեր դպրոցների կողմից կազմակերպված միջոցառումներին:

Հաստատության մանկավարժական համակազմի ներկայացուցիչներն ակտիվ մասնակցել են Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ներկայացված տարբեր նորմատիվաիրավական փաստաթղթերի նախագծերի քննարկումներին, ներկայացրել առաջարկներ: ԿԳՄՍՆ-ի հետ համագործակցության շրջանակներում 2021-2023 թվականներին դպրոցը մրցութային կարգով ընդգրկվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների հերթական ատեստավորում իրականացնող կազմակերպությունների ցանկում: Դպրոցը համագործակցում է ՀՀ ԿԳՄՍՆ-ի «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Կրթական տեխնոլոգիաների կենտրոն» ՊՈԱԿԻ, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամ»-ի, ԵՊՀ-ի , ԵՊՄՀ-ի, ԵՊԲՀ և տարբեր աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների, Հայկական Կարմիր Խաչի ընկերության, ՀՄԿ-ի, ԱՏՁՄ-ի, Հայաստանի գրողների միության, ՀՀ Պաշտպանության նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի և այլ կառույցների հետ (արտադպրոցական, կրթամշակութային ՀԿ-ներ, «Արմաթ» ինժեներական լաբորատորիա և այլն): Համագործակցության շրջանակում սովորողների ամենամյա համաժողովների կազմակերպման, և փորձի փոխանակման հուշագիր է ստորագրվել «ԱՅԲ դպրոցի, Երևանի «Քվանտ», Գյումրու «Ֆոտոն» վարժարանների, «Երևակ» կրթահամալիրի, Վանաձորի «ԷՎՐԻԿԱ» բնագիտամաթեմատիկական, ԵՊԲՀ «Հերացի» ավագ և Երևանի Դ. Վարուժանի անվան հ.89 հիմնական դպրոցների հետ:

Հետագա տարիներին համագործակցող կառույցների հետ ավելի կամրապնդվեն մեր առկա ծրագրերը, իսկ զարգացման միտումները տեսնում եմ կրթական ծրագրեր իրականացնող տարբեր կառույցների և ուսումնական հաստատությունների, կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակի ընդլայնմամբ : Համագործակցության որոշ շրջանակներ ներկայացվում են ստորև.


ԱՅԼ
ԿԶՆԱԿ
ԳԹԿ
ԿՏԱԿ
ՀԿ-ՆԵՐ
ԱՐՄԱԹ ԻԼ
ՀԿ -ՆԵՐ
ԿԳՄՍ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍ’. Հ-ԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ՆՈՒՀ, ԴՊՐՈՑՆԵՐ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆԱՐՏ ԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ

Գծապատկեր 5

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| ✦ Մշտական համագործակցութուն տարբեր կառույցների հետ՝<br>• ԿԳՄՍՆ<br>• ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ<br>• ԳԹԿ<br>• ԿՏԱԿ<br>• «ԱՋԱՓՆՅԱԿ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ<br>• ԴՊՐՈՑՆԵՐ<br>• ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>• ՏՄԱԿ<br>• ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և այլ հաստատություններ<br>• ՀԿ-ներ և այլ կառույցներ<br>✦ Համագործակցության շրջանակում սովորողների ամենամյա համաժողովների կազմակերպում հուշագիր ստորագրած դպրոցների հետ («ԱՅԲ» դպրոց, Երևանի «ՔՎԱՆՏ», Գյումրու «ՖՈՏՈՆ» վարժարաններ, Վանաձորի «ԷՎՐԻԿԱ» բնագիտա-մաթեմատիկական, ԵՊԲՀ «ՀԵՐԱՑԻ», ավագ, Երևանի Դ.ՎԱՐՈՒԺԱՆԻ անվան հ.89 դպրոցներ)<br>✦ Համագործակցություն ԵՊՀ-ի և այլ բուհերի հետ:<br>✦ Համագործակցության շրջանակներում տարբեր համատեղ միջոցառումների կազմակերպում<br>✦ Արդյունավետ հաղորդակցություն համայնքի և տարբեր կառույցների հետ<br>✦ Դպրոցի մասին տեղեկատվության ներկայացում սոցիալա-կան ցանցերի, դպրոցի կայքէջի և առցանց այլ հարթակների միջոցով: | ✦ Միջազգային կառույցների հետ համագործակցության փորձի բացակայություն<br>✦ Դպրոցների համար հայտարարված դրամա-շնորհային և բարեգործական ծրագրերի սահ-մանափակ առկայություն կամ բացակայու-թյուն |

| Նպատակ<br>Արդյունավետ համագործակցութան և հաղորդակցության ապահովում կրթության ոլորտի զարգացման գործառույթներ իրականացնող տարբեր կառույցների և շահառուների հետ:<br>Խնդիրներ<br>1. Համագործակցության և հաղորդակցության արդյունավետ ձևերի բացահայտում<br>2. Համագործակցող կազմակերպությունների շրջանակի ընդլայնում՝ ի շահ դպրոցի գործունեության արդյունավետության բարելավման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ռիսկեր<br>1. Համայնքի հետ համագործակցության սահմանափակ հնարավորություններ<br>2. Միջազգային կառույցների և ՀԿ-ների կողմից կրթական ոլորտում իրականացվող սահմանափակ ծրագրեր | | | | | | |
| Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները<br>1. «Աջափնյակ» վարչական շրջանի աշխատակազմի տեղեկատվության ապահովում<br>2. Համայնքի հետ համատեղ իրականացվող ծրագրերի մշակում<br>3. Կրթական ծրագրեր իրականացնող տարբեր միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում դպրոցի գործունեության լուսաբանում և համագործակցության ծրագրերի առաջարկների ներկայացում: | | | | | | |
| **Միջոցառումներ, գործողություններ** | **Արդյունքների գնահատման չափանիշ** | **Պատասխանատու** | **Ժամկետ** | **Ռեսուրսներ** | **Ֆինանսա-կան ռե-սուրսներ** | **Վերահսկման մեխանիզմներ** |
| Դպրոցի հետ համագոր-ծակցող կազմակերպու-թյունների հետ հանդի-պումների ու քննարկում-ների կազմակերպում, հետագա բարելավման կարիքների բացահայ-տում և գործողություն-ների պլանի մշակում: | Համագործակ-ցության շրջա-նակի ընդլայ-նում, գործընկեր դպրոցների թվի ավելացում (հանրապետութ-յան 3-4 դպրոց-ներ, Պետերբուր-գի հ. 604 միջնա-կարգ դպրոց, Հոնչի միջազգա- | Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղա-կալներ, կառա-վարման և խորհր-դակցական մարմիններ, գործընկեր դպրոցներ | 2023-2024 ուստարի | Հանդիպումների և քննարկում-ների տարբեր հարթակներ (առկա և հեռավար) | Պետական բյուջե | Մշտադիտարկում ,ներքին գնահատ-ման հաշվետվու-թյուններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | յին դպրոց, Ավի-ամոդելավորման դպրոց) | | | | | |
| Դպրոցի համագործակ-ցության հաջողված փոր-ձը և հետագա բարելավ-մանն ուղղված ծրագրերը տարբեր հարթակների միջոցով ներկայացնել շահառուներին, վերանա-յել և թարմացնել դպրոցի կայքէջի նյութերը | Տեղեկատվութ-յան հասանելիու-թյան առկայու-թյուն | Դպրոցի տնօրենություն, տնօրենի տեղա-կալներ, կառա-վարման և խոր-հրդակցական մարմիններ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մաս | 2023-2028թթ. | Հանդիպումների և քննար-կումների տար-բեր հարթակներ (առկա և հեռավար) | Պետական բյուջե | Մշտադիտարկում ներքին գնահատ-ման հաշվետ-վություններ |
| Համայնքի հետ ավանդույթ դարձած տարբեր միջոցառումների մասնակցություն | Համատեղ մշակ-ված ծրագրերի առկայություն /համայնքային և քաղաքային շա-բաթօրյակների, ազգային տոնե-րին նվիրված միջոցառումների կազմակերպում/ | Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղա-կալներ, խորհըր-դակցական մար-միններ | 2023-2028թթ. | Հանդիպում-ների և քըն-նարկումների տարբեր հար-թակներ (առկա և հեռավար) | Պետական բյուջե | Մշտադիտարկում ,ներքին գնահատ-ման հաշվետ-վություններ, ուսումնադաստի-արակչական աշ-խատանքների պլան |
| Վարչական շրջանի աշ-խատակազմի հետ «Իմ համայնքը» շարադրութ-յունների մրցույթի կազ-մակերպում | Սովորողների կողմից հա-մայնքի կա-րիքների բա-ցահայտում | Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղա-կալներ, համայն-քի ներկայացու-ցիչներ, խորհըր-դակցական մար- | 2024թ. | Մրցույթի արդյունքների գնահատման չափանիշներ, համապատա-խան տարածք, | Պետական ֆինանսա-վորման խնայողու-թյունների հաշվին | Մշտադիտարկում ուսումնադաստի արակչական աշ-խատանքների պլան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մինների ղեկավարներ | | պարգևատրման միջոցներ | | |
| Տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության գնահատման ռուբրիկի մշակում | Հետագա համագործակցության ճշտված կարիքների քարտեզագրում | Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալներ, խորհրդակցական մարմինների ղեկավարներ | 2023թ. | Հարցաթերթիկներ, հարցումների արդյունքներ | | Ներքին գնահատման հաշվետվություններ |





ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Նախորդ հինգ տարիների ընթացքում դպրոցի տնօրենի և համակազմի ջանքերն ուղղվել են ոչ միայն շենքային պայմանների և նյութատեխնիկական միջոցների համալրման ուղղված միջոցառումների իրականացմանը, այլև ուսումնական գործընթացի և կրթության որակի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև մասնակիցների համար հոգեբանական հարմարավետության ապահովմանը, որի շնորհիվ բարձրացել են ներքին մոտիվացիան և հետաքրքրությունը ուսման նկատմամբ, ձևավորվել են առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, ներդաշնակ համագործակցություն, որն ուղղված է խնդիրները համատեղ լուծելու, որոշումներ կայացնելու և պատասխանատվություն ստանձնելու նպատակին: Իրականացվել են անվտանգ ուսումնական միջավայրի և կրթության գործընթացի մասնակիցների տեղեկատվության ապահովման աշխատանքների կազմակերպմանը, սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջության պահպանմանն ուղղված տարբեր միջոցառումներ: Դպրոցի միջանցքների տեսանելի հատվածում փակցված է արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլանը, վերանորոգվել է նկուղային հարկի մոտ 400 քմ տարածքը, որը արտակարգ իրավիճակների ժամանակ կարող է ծառայել որպես ապաստարան: Ուսումնական հաստատության աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին, առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ տեղեկատու, հրշեջ ծորակ և այլն) տեղակայմանը, տիրապետում են դրանց օգտագործման կանոններին: Դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվել է արտակարգ իրավիճակների հանձնաժողով, փրկարարական, հակահրդեհային, հասարակական կարգի պահպանման և այլ կազմավորումներ: Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ԱՌԿ պլանի համաձայն՝ սովորողների և համակազմի համար կազմակերպվում են այդ թեմաներին նվիրված տեղեկատվական զրույցներ, քննարկումներ, իրականացվում են ուսումնական վարժանքներ: Կառավարման և ուսումնադաստիարակչական գործընթացների արդյունավետ կազմակերպման շնորհիվ պայմաններ են ձևավորվել սովորողների ինքնադրսևորման, ներուժի ինքնիրացման և կարիքներին համապատասխան ուսուցման և ուսումնառության գործընթացները իրականացնելու համար: Դպրոցում սովորողների հետաքրքրություններին համապատասխան գործող տարբեր խմբակները, ինչպես նաև երկարօրյա ուսուցման կազմակերպումը նպաստել են նշված խնդիրների լուծմանը, սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը, ստեղծագործական ներուժի խթանմանը, ինքնազարգացմանը և ինքնակատարելագործմանը, ստեղծագործական, հետազոտական, աշխատանքներ կատարելու և համագործակցային փափուկ հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Մանկավարժական համակազմի հետևողական աշխատանքի և ձևավորված բարոյահոգեբանական առողջ միջավայրի շնորհիվ դպրոցում սովորողների կամ աշխատակիցների կողմից չի արձանագրվել հուզական (ծաղրել, մականուններ կպցնել, անհիմն նկատողություններ անել, ոչ օբյեկտիվ գնահատականներ տալ, այլ երեխաների ներկայությամբ արժանապատվության ոտնահարել և այլն), բուլլինգի կամ ֆիզիկական բնույթի բռնության և ոչ մի դեպք: Ենթակառուցվածքների համագործակցային և մասնակցային մոտեցումների ներդրման արդյունքում դպրոցում իրականացվող տարբեր բնույթի միջոցառումները նպաստել են համակազմի և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշման և սովորողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը: Դպրոցական շենքը և ուսումնական տարածքները վերանորոգված են և համալրված համապատասխան

գույքով, անհրաժեշտ ուսումնական և դիդակտիկ պարագաներով, տեխնոլոգիաներով: Սակայն դրանց պարբերաբար համալրումն ու արդի պահանջներին համապատասխանեցնելը բոլոր ժամանակների հրամայականներից է: Ուսումնական միջավայրի հարմարեցման խնդիրները և կարիքները ներկայացված են նաև նախորդ բաժիններում: Կրթության գործընթացի մասնակիցների շրջանում այդ առումով պարբերաբար իրականացվել են հարցումներ, որոնց արդյունքում վերանայվել են նախատեսված ծրագրերն ու գործողությունները: Ներքին գնահատման հաշվետվության տվյալներով «Ինչպե՞ս եք գնահատում Ձեր դպրոցում ուսումնական միջավայրի հագեցվածությունը /գրադարան, դասասենյակներ, համակարգչային և առարկայական կաբինետներ, լաբորատորիաների և այլն/» հարցին տրված պատասխաններն ունեն հետևյալ պատկերը.




Գծապատկեր 4

*Դպրոցի ուսումնական միջավայրի հագեցվածության վերաբերյալ հարցում է իրականացվել նաև աշակերտների շրջանում: «Քո գնահատմամբ ինչպիսի՞ն է դպրոցում ուսումնական միջավայրի հագեցվածությունը /գրադարան, համակարգչային կաբինետներ և լաբարատորիաներ/» հարցի պատասխանների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.*




Գծապատկեր 6

«Դասերի ժամանակ օգտագործվող առկա ուսումնադիտողական պարագաները և ուսումնադիդակտիկ նյութերը /քարտեզներ, պլակատներ, տեսալսողական նյութեր և այլն/ բավարարում են Ձեզ» հարցին ուսուցիչների 60.7%-ը պատասխանել է՝ **լիովին**, 39.3%-ը՝ **մասամբ**: Իսկ «Ի՞նչ հաճախականությամբ եք օգտագործում ուսումնադիդակտիկ պարագաներ և նյութեր» հարցին 89.3 %-ը պատասխանել է՝ **ամեն շաբաթ կամ ավելի հաճախ**, 7.1%-ը՝ **ամեն ամիս**, և միայն 3.6%-ը նշել է՝ **այլ**:




Գծապատկեր 5

Դպրոցի ուսումնական լաբորատորիաների, կաբինետների, դահլիճների և այլ տարածքները հիմնականում բավարարում են աշակերտների և ուսուցիչների կրթական կարիքները: Ուսուցիչները հաճախ են օգտագործում ուսումնադիդակտիկ նյութեր և պարագաներ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ✚ Շենքային պայմանները բարելավելու նպատակով պարբերաբար իրականացվում են ընթացիկ բարեկարգման աշխատանքներ:<br>✚ Ուսումնական տարածքները անվտանգ են և հարմարեցված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպմանը:<br>✚ Առկա են արտակարգ իրավիճակների տարահանման և ԱՌԿ պլաններ:<br>✚ Նկուղային հարկի որոշակի տարածք (400 քմ) վերանորոգված է և կարող է ծառայել որպես ապաստարան:<br>✚ Ուսումնական միջավայրը համալրվում է ՏՏ միջոցներով և ուսումնադիդակտիկ պարագաներով. | ✚ Ոչ բոլոր դասասենյակներն են ապահոված ՏՀՏ միջոցներով:<br>✚ Կա սովորողների՝ ըստ հետաքրքրության ակումբների հնարավորությունների ընդլայնման սուր անհրաժեշտություն<br>✚ Զգացվում է համակարգչային կաբինետի սարքավորումների նորացման անհրաժեշտություն: Համակարգչային երկրորդ կաբինետի բացակայություն:<br>✚ Ներառական կրթության կազմակերպման պայմանների բարելավման անհրաժեշտություն, կրթության առանձնահատուկ կարիք ունեցող սովորողների |

| | |
|---|---|
| - Ինտերնետ կապը գործում է դպրոցի ողջ տարածքում:<br>- Գրքային ֆոնդը մշտապես համալրվում է նոր գրականությամբ:<br>- Շահառուները հնարավորություն ունեն օգտագործելու ընթերցասրահի տարածքը:<br>- Դասասենյակները վերանորոգված են և ապահովված գույքով:<br>- Քիմիայի և ֆիզիկայի գործող լաբորատորիաները ապահովված են նոր սարքավորումներով:<br>- Առկա է տեխնոլոգիայի կաբինետ, որը նպաստում է տեխնոլոգիական հմտությունների զարգացմանը:<br>- Հանդիսությունների դահլիճն ու մյուս տարածքները վերանորոգված են ու կահավորված:<br>- Գործում է « Արմաթ» ԻԼ:<br>- Դպրոցամերձ տարածքում առկա է ջերմոցային տնտեսություն:<br>- Դպրոցն ունի իր վեբկայքն ու ակտիվ է սոցիալական հարթակներում:<br>- Ձևավորված է փոխվստահության և համագործակցային միջավայր:<br>- Առկա է խնդիրները լուծելու և որոշումներ ընդունելու մասնակցային մոտեցումների ձևավորված մշակույթ:<br>- Սովորողների և համակազմի կողմից պատասխանատվություն ստանձնելու պատրաստակամություն<br>- Բյուջետում առաջին բուժօգնություն տրամադրելու անհրաժեշտ միջոցների առկայություն:<br>- Ներառական կրթության կազմակերպման համար որոշ հարմարեցումների առկայություն (մուտքի թեքահարթակ, ուսումնադիդակտիկ և այլ միջոցներ):<br>- Սովորողներն ու աշխատակազմը տեղեկացված են<br>- արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին, առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի, հրշեջ | համար հարմարեցված սանհանգույցի բացակայություն:<br>- Նկուղային հարկի տարածքի որոշ հատվածի վերանորոգման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտություն.:<br>- Ուսումնական գործընթացի կազմակերպում միջին հերթով:<br>- Երկրորդ մարզադահլիճի բացակայություն: |

| | |
|---|---|
| ծորակի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին:<br>- Արտակարգ իրավիճակների տարհանման պլանի առկայություն: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Նպատակ.** Սովորողների կարողունակությունների ձևավորմանը նպաստող, ուսման որակի բարելավմանն ուղղված արդյունավետ ուսումնական միջավայրի ապահովում  և շարունակական զարգացում<br>**Խնդիրներ.** Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման ձևերի ներդրում: | | | | | | |
| **Ռիսկեր**<br>1. Ֆինանսական անբավարար միջոցներ<br>2. Սովորողների մոտիվացիայի նվազում | | | | | | |
| **Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**<br>1. Առկա միջոցների արդյունավետ կառավարում<br>2. Ցուցահանդես-վաճառքների կազմակերպում<br>3. Սովորողների նախաձեռնությունների խրախուսման մեխանիզմների մշակում:<br>4. Աշակերտական խորհրդի դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում: | | | | | | |
| **Միջոցառումներ, գործողություններ** | **Արդյունքների գնահատման չափանիշ** | **Պատասխանատու** | **Ժամկետ** | **Ռեսուրսներ** | **Ֆինանսական ռեսուրսներ** | **Վերահսկման մեխանիզմներ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնական տարածքների ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացում | Բոլոր սովորողների համար հարմարավետ ուսումնական միջավայրի առկայություն | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023-2028թթ. | Անհրաժեշտ շինարարական նյութեր | Պետական բյուջե | Մշտադիտարկում, ներքին գնահատման հաշվետվություններ |
| Դասասենյակներն ապահովել դյուրակիր համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակներով | Ուսուցիչների կողմից դասապրոցեսի ընթացքում ՏՀՏ միջոցների օգտագործում, տարեկան առնվազն 2-3 համակարգիչ, էլեկտրոնային 1 գրատախտակ կամ պրոյեկտոր | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023-2028թթ. | Համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ -ներ և այլ միջոցներ | Պետական բյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, դասալսումներ |
| Առարկայական կաբինետների ուսումնադիտակտիկ նյութերի համալրում, առկա միջոցների վերանորոգում | Կրթության որակի բարելավում (55%) | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, մեթոդմիավորումներ, ուսուցիչներ | 2023-2028թթ. | Ուսումնադիտակտիկ նյութեր (պաստառներ, քարտեզներ, նյութեր և այլն) | Պետական բյուջե | Մշտադիտարկում |
| Սննդի կետի պայմանների, բարելավում, տարածքի ընդլայնում | Ընդլայնված տարածքի առկայություն /սննդի կետում ապահովել 150տեղ/ | Վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող համակազմ | 2023-2028թթ. | Շինարարական, նյութեր, համապատասխան գույք (սեղան, | Պետբյուջե, լրացուցիչ վճարովի ծառայություններից ստացված միջոցներ | Ներքին գնահատման հաշվետվություններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | աթոռ, պա-հարան, այլն) | | |
| Սովորողների՝ ըստ հետաքրքրություն-ների ակումբների, խմբակների գոր-ծունեության պայ-մանների ապահո-վում: | Սովորողների հետազոտական, ստեղծագործա-կան, սոցիալական հմտությունների զարգացման բա-րելավված միջա-վայրի առկայու-թյուն Ստեղծարար մտածողություն | Տնօրեն, համա-կարգող, մասնա-գիտական աջա-կցությունների գծով տնօրենի տե-ղակալ, մանկա-վարժական համակազմ | 2023-2028թթ. | Համապա-տասխան տարածքնե-րի օգտագոր-ծում /դասա-սենյակ, լա-բորատորիա-ներ, կաբի-նետներ, դահլիճ և այլն/ | Պետական բյուջե | Մշտադիտար-կում, ուսումնա-դաստիարակ-չական աշխա-տանքների, մասնագիտա-կան աջակցութ-յունների գծով տնօրենի տե-ղակալի հաշվե-տվություններ |
| Սովորողների հետ առողջ ապրելա-կերպի, հանդուր-ժողականության, համագործակցութ-յան, նրանց իրա-վունքների և պար-տականություն-ների, բարեվար-քության կանոննե-րի պահպանման հարցերին, վատ սովորույթներին, մեդիա անվտան-գության, բռնության կանխարգելման, սոցիալական հմտությունների բարելավման | Սոցիալական հմտությունների զարգացում, բա-րոյահոգեբանա-կան առողջ միջա-վայրի առկայութ-յուն, բռնության և վատ սովորույթ-ների, դեպքերի կանխարգելում, վերոնշյալ թեմա-ների վերաբերյալ առնվազն 1-ական զրույց-քննարկ-ման կազմակեր-պում | Տնօրեն, համա-կարգող՝ մասնա-գիտական աջակ-ցությունների գծով տնօրենի տեղա-կալ, մանկա-վարժական հա-մակազմ, դասղեկ-ներ, աշակերտա-կան խորհուրդ | 2023-2028թթ. | Ուսումնա-կան նյութեր, տեսաֆիլմեր, դիդակտիկ պարագաներ | Պետական բյուջե | Մշտադիտար-կում, ուսումնա-դաստիարակ-չական աշխա-տանքների, մասնագիտա-կան աջակցութ-յունների գծով տնօրենի տե-ղակալի հաշվե-տվություններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| առանձնահատկություններին նվիրված զրույց-քննարկումների կազմակերպում | | | | | | |
| Արտակարգ իրավիճակներում համակազմի և սովորողների վարքագծային կանոնների իրազեկման զրույցների, քննարկումների, սեմինարների և ուսումնական վարժանքների կազմակերպում | Արտակարգ իրավիճակներում տեղեկատվությանը համապատասխան վարքագծի դրսևորում. Տարվա ընթացքում կազմակերպել ԱՌԿ պլանով նախատեսված առնվազն 2 ուսումնական վարժանք: Բոլոր շահառուներին տարվա ընթացքում առնվազն 1-2 անգամ հրավիրել սեմինարների, կլոր սեղան քննարկումների: | Տնօրեն, համակարգող՝ մասնագիտական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ, ծնողական և աշակերտական խորհուրդներ, զինղեկ | 2023-2028թթ. | Համապատասխան գրականություն, ուսումնական տեսաֆիլմեր, ինտերնետային պաշարներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մասնագիտական աջակցությունների գծով տնօրենի տեղակալի հաշվետվություններ |
| Ջերմոցային տնտեսության, կանաչապատ տարածքների բարեկարգում. | Սովորողների արժեքային և գործնական հմտությունների բարելավում, ջերմոցային տնտեսությունը, | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրակա- | 2024թ | Այդ նպատակի համար անհրաժեշտ միջոցներ (գործիքներ, տեղեկատվական գրա- | Ցուցահանդես-վաճառքից առաջացած միջոցներ, վարչական շրջանի օժանդակություն | Մշտադիտարկում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սովորողների էկոլոգիական դաստիարակությունը զարգացնելու նպատակով համագործակցել կազմակերպությունների հետ: | նացնող համակազմ, ԲՏՃՄ ուսուցիչներ | | կանություն, ինտերնետային նյութեր) | | |



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Դպրոցն ունի  111 աշխատակից, որից 93-ը՝ մանկավարժական աշխատողներ (77 ուսուցիչ,  6 վարչական աշխատող) են,   18 –ը՝ ուսումնաօժանդակ անձնակազմի անդամներ:




Գծապատկեր 6

Բոլոր ուսուցիչների ունեն  բարձրագույն համապատասխան կրթություն, բացառությամբ մեկ ուսուցչի, և ընդգրկված են համապատասխան առարկայական մեթոդական միավորումներում: Յուրաքանչյուր տարի ուսուցիչների 1/5-րդը մասնակցել  է ուսուցիչների հերթական ատեստավորման նպատակով կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին և ատեստավորվել: Ուսուցիչների շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը 25 ժամ է: Մանկավարժական աշխատողներից շատերը հանդես են գալիս որպես մասնագիտական զարգացման նպատակով իրականացվող դասընթացների կազմակերպիչներ և վերապատրաստող դասախոսներ: Նրանց մի մասը կրթական համակարգում մեծ ճանաչում ունեցող մասնագետներ են: Ներկայումս դպրոցն ունի ուսուցչի տարակարգի արժանացած 6 ուսուցիչ. և 9 ուսուցիչ  2023թ տարակարգ ստանալու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան հանձնաժողովին է ներկայացրել պահանջվող փաստաթղթերի փաթեթները: Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է մրցութային կարգով՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի:

Իմ գործունեության ընթացքում կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը պարբերաբար համալրվելու է նոր բարձրորակ կադրերով:

Այս տարիների ընթացքում ուսուցիչների զգալի մասը կրթական տարբեր հարթակներում հանդես է եկել ուսումնական գործընթացի բարելավման  մեթոդամանկավարժական նորամուծությունների ներդրման առաջարկներով,  սեփական փոր-ձառության արդյունքները ներկայացրել գիտամանկավարժական ամսագրերում և կրթության բարելավման նպատակով կազմակերպված հանրապետական գիտագործնական  համաժողովներում: Դասապրոցեսի կառավարման արդիականաց-ման նպատակով ստեղծվել են յուրաքանչյուր առարկայի էլեկտրոնային ռեսուրսների պաշարներ:

Գծապատկեր 7






Գծապատկեր 8

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| • Մասնագիտական համապատասխան որակավորմամբ աշխատակազմ<br>• Բարձրագույն կրթություն ունեցող և ատեստավորված ուսուցիչներ<br>• Ուսուցչի տարակարգի արժանացած ուսուցիչներ<br>• Ուսուցիչներին վերապատրաստող դասախոսական ձևավորված թիմ<br>• Դասավանդման ընթացքում սովորողակենտրոն մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառելու հմտություններին տիրապետող ուսուցիչներ<br>• Գնահատման այլընտրանքային ձևերի իմացության և դրանց կիրառման անհրաժեշտությունը ընկալող ուսուցչական համակազմ<br>• Հեռավար ուսուցման հարթակների օգտագործման հմտություններին տիրապետող համակազմ | ➢ Ուսուցչի ծանրաբեռնված աշխատանք<br>➢ Դասարանում աշակերտների մեծ թվաքանակ<br>➢ Ուսուցման և գնահատման մեթոդների կիրառման հմտությունների բարելավման կարիք<br>➢ Ուսուցիչների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման չափանիշների վերանայում<br>➢ Մոտիվացիայի պակաս<br>➢ Երիտասարդ կադրերի համալրման կարիք<br>➢ ՏՀՏ նոր ծրագրերի լիարժեք կիրառման հմտությունների բարելավման անհրաժեշտություն<br>➢ Հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների զարգացման կարիք<br>➢ Սովորողների՝ նախագծային աշխատանքներ կատարելու, առաջնորդման կարողությունների բարելավման անհրաժեշտություն<br>➢ Կամավոր ատեստավորման դիմելու մոտիվացիայի պակաս և մտավախություն: |

| | |
|---|---|
| - Վարպետության դասեր անցկացնող և սկսնակ ուսուցիչների հետ մեթոդամանկավարժական օժանդակության պատրաստակամություն դրսևորող մասնագետներ<br>- Դասի ընթացքում ՏՀՏ միջոցների և էլեկտրոնային ռեսուրսների օգտագործում<br>- Գործընկերների հետ համագործակցության և փորձի փոխանակման ձևերի հաստատված մշակույթի առկայություն, խնդիրները մասնակցային ձևաչափով լուծելու պատրաստակամություն | |

2022թ. օգոստոսին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանվել են հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները, որոնք ուսուցչի մասնագիտական զարգացման, գիտելիքների և աշխատանքային գործունեության կարողությունների պատասխանատվության նկարագիրն են: Այդ չափանիշները ներառում են հետևյալ չորս բաղադրիչները.

1) զարգացման ոլորտներ.

2) մասնագիտական գործունեության ձևեր.

3) կարողունակության մակարդակներ.

4) մանկավարժի բնութագրեր:

Ըստ զարգացման ոլորտների՝ նշված են մասնագիտական գործունեության ձևերը, այդ թվում՝

1) առարկայական գիտելիքների զարգացում

2) դասընթացների և դասերի պլանավորում՝ հաշվի առնելով սովորողների կարիքները

3) դասի վարում

4) տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ինտեգրում

5) 21-րդ դարի հմտությունների (քննադատական մտածողություն ստեղծարարություն համագործակցություն հաղորդակցում տեղեկատվական գրագիտություն մեդիագրագիտություն տեխնոլոգիական գրագիտություն ճկունություն առաջնորդում նախաձեռնողականություն արդյունավետություն սոցիալական հմտություններ) խթանում.

6) ռեսուրսների կառավարում.

7) սովորողների կարիքների ճանաչում կամ բացահայտում.

8) ուսումնառության գնահատում.

9) ուսումնական գործընթացի ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողություններ

10) մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում

11) մասնագիտական բարեվարքություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն և այլն:

Հաշվի առնելով այդ չափանիշները՝ նախատեսված գործողություններում մեր կողմից առանձնացրվել են մանկավարժական համակազմի մասնագիտական զարգացմանն ուղղված նպատակն ու դրանից բխող խնդիրները և գործողությունները:

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի կառավարման և կրթության որակի բարելավմանն ուղղված գործընթացների արդյունավետության ապահովման համար կարևոր երաշխիք են մարդկային ռեսուրսների ներգրավման ու փոխկապակցված գործունեության կազմակերպումը, հաստատության ռազմավարության ծրագրում կանխանշված նպատակների իրականացման ու շարունակական բարելավմանն ուղղված ջանքերի ներդրումը:

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության համար փոխհամագործակցության մասնակցային միջավայրի ապահովումը և խրախուսման ձևերի կիրառումը կարևոր գործոն է համակազմի մոտիվացիայի բարձրացման համար: Մոտիվացիան ներառում է հետևյալ գործոնները՝

- ❖ հաջողության հասնելու պահանջմունք
- ❖ հետաքրքիր աշխատանք
- ❖ հեղինակություն
- ❖ պատասխանատվություն
- ❖ մասնագիտական աճ
- ❖ առաջխաղացման հնարավորություններ
- ❖ և այլն:

Մշտապես դպրոցի ղեկավարության ուշադրության կենտրոնում են եղել աշխատակազմի գործունեության արժևորման և խրախուսման ձևերի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացումը, քանի որ միայն իր աշխատանքը եռանդով ջանասիրաբար և ստեղծագործաբար կատարող մանկավարժն է ունակ ապահովելու որակյալ հանրակրթություն: Ուսուցիչների աշխատանքն ու ներդրումը մանկավարժական գործունեության մեջ անգնահատելի են ինչպես յուրաքանչյուր անձի, այնպես էլ ողջ պետության զարգացման համար, քանի որ նրանք առավել մեծ ազդեցություն են ունենում սովորողների կրթության և դաստիարակության վրա:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցում ձևավորված է առողջ բարոյահոգեբանական միջավայր:<br>• Դպրոցի նյութատեխնիկական բազան և պայմանները նպաստում են մանկավարժական համակազմի մասնագիտական զարգացման նպատակների իրականացմանը:<br>• Ձևավորված է համագործակցային միջավայր:<br>• Ձևավորված է նվաճումների և ձեռքբերումների արժևորման մշակույթ:<br>• Տնօրենության կողմից խթանվում և խրախուսվում են աշխատակազմի անդամների՝ դպրոցի բարելավմանն ուղղված բոլոր նախաձեռնությունները:<br>• Ներդրված են խրախուսման ավանդույթ դարձած տարբեր ձևեր:<br>• Ուսումնական միջավայրը նպաստում է համակազմի ինքնակրթության բարելավման պահանջարկի իրացմանը<br>• Առկա են աշխատակազմի ստեղծագործական կարողությունների զարգացումը խթանող մեխանիզմներ:<br>• Ստեղծված են արտաքին և ներքին վերապատրաստումներին մասնակցելու հնարավորություններ:<br>• Դպրոցի տնօրենության կողմից խրախուսվում է առցանց հարթակներում իրականացվող վերապատրաստումներին ուսուցիչների մասնակցությունը:<br>• Առկա են փորձառու ուսուցիչների կողմից սկսնակ ուսուցիչներին աջակցության տարբեր ձևերի կիրառման հնարավորություններ:<br>• Ուսուցչի տարակարգի և կամավոր ատեստավորման դիմելու խրախուսական միջավայրի առկայություն: | • Աշխատակազմի որոշ անդամների ինքնակրթության մշակված ծրագրերի բացակայություն<br>• Աշխատակազմի անդամների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանով սահմանված մասնագիտական չափանիշների և ինքնագնահատման մեխանիզմների ոչ բավարար իմացություն<br>• Նույն ծրագրեր իրականացնող հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման համատեղ մշակված ծրագրերի բացակայություն<br>• Ուսուցչի կամավոր ատեստավորմանը դիմելու մոտիվացիայի պակաս<br>• Ստեղծագործող և շնորհալի ուսուցիչների խրախուսման ձևերի ներդրման անհրաժեշտություն:<br><br>- |

**Նպատակ.**

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում. կրթության բովանդակության նոր մոտեցումների և հանրակրթության նոր չափորոշչի պահանջներին համահունչ գործունեություն իրականացնող պատրաստակամ թիմի ձևավորում:

**Խնդիրներ.**

1. Ուսուցիչների մեթոդամանկավարժական կատարելագործման և դասավանդման հմտությունների բարելավում
2. Ուսուցիչների գնահատման հմտությունների բարելավում
3. ՏՀՏ միջոցների կիրառման հմտությունների բարելավում դասավանդման ընթացքում
4. Ուսուցչի գործունեության գնահատման խրախուսման մեխանիզմների և ձևերի բարելավում
5. Ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում, փոխվստահության միջավայրի ձևավորում:

**Ռիսկերը**

- Մանկավարժական համակազմի մոտիվացիայի նվազում
- Ուսուցչի ցածր աշխատավարձով պայմանավորված արտահոսք
- Ֆինանսական անբավարար միջոցներ

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Կազմակերպել ուսուցչի հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումներ (ուսուցչի մեծարում, գործունեության գնահատում, ստեղծագործող ուսուցիչների աշխատանքների ներկայացում, մրցույթների կազմակերպում և այլն):
- Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորման և ուսուցչի տարակարգին դիմելու գործընթացներին:
- Դպրոցի վարչատնտեսական համակարգողին ներկայացնել ուսուցիչներին դրամական խրախուսման միջոցներ տրամադրելու առաջարկներ:
- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում

| Միջոցառումներ, Գործողություններ | Արդյունքների գնահատման չափանիշ | Պատասխանատու | Ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ | Ֆինանսական միջոցներ | Վերահսկողության մեխանիզմներ |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մանկավարժական համա-կազմի մեթոդամանկավար-ժական զարգացման վերապատրաստումների կազմակերպում | Նոր մոտեցում-ներին և տեխնո-լոգիաներին լիարժեք տիրապետող ուսուցիչների առկայություն (դասավանդող ուսուցիչների առնվազն 20-25 կմասնակցեն պարտադիր ատեստավորման համար իրականացվող դասընթացներին, ինչպես նաև մասնագիտական զարգացմանն ուղղված այլ դասընթացների): | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմի-ավորման նախա-գահներ | 2023-2028թթ. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | Դասընթացա-վարներ, ՏՀՏ և այլ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Ուսուցման և ուսումնառու-թյան ժամանակակից մոտե-ցումների և տեխնոլոգիանե-րի կիրառման հմտություն-ների առանձնահատկութ-յունների վերաբերյալ սեմի-նարների և քննարկումների կազմակերպում: | Ուսուցման և ու-սումնառության արդի մոտեցում-ներին իրազեկ-ված և դրանք գործնականում կիրառելու հմտություններ ունեցող մաս-նագիտական թի-մի առկայություն Կազմակերպել առնվազն 1-2 սեմինար-քննար-կում գործընկեր դպրոցների հետ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ, հրավիրված մասնա-գետներ | 2023-2028թթ. | Դասընթացա-վարներ, ՏՀՏ և այլ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների, ներքին գնահատման հաշվետվություններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համագործակ-ցության շրջանակում: Գործընկերներ՝ «Քվանտ», «Հերացի», «Ֆոտոն», «Էվրիկա», «Այբ», հ. 89 դպրոցներ | | | | | |
| Հանրակրթության պետա-կան և առարկայական նոր չափորոշիչների ներդրմամբ պայմանավորված վերա-պատրաստումների կազմակերպում: Արդ-յունքների քննարկումներ: | ՀՊՉ նոր չա-փորոշիչների ներդրմամբ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպում | Վերապատրաստող կազմակերպություն-ներ, ԿԶՆԱԿ, Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ, վերա-պատրաստող /մենթոր/ ուսուցիչներ | 2023-2028թթ. | ԿԶՆԱԿ-ի կող-մից իրակա-նացվող վերա-պատրաս-տումներ, դպրո-ցի մեթոդմիա-վորումներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների նա-խագահների հաշվետ-վություններ, դասա-լսումների արդյունքներ |
| «Սովորողների՝ Հանրա-կրթության պետական չափորոշով սահմանված կարողունակությունների զարգացման առանձնա-հատկությունները» թեմայով սեմինարի կազմակերպում | ՀՊՉ առարկայա-կան չափորոշիչ-ների ներդրման ընթացքում առա-ջացած դժվա-րությունների բա-ցահայտում և դրանց հաղթա-հարման ռազմա-վարության մշակում՝ուսում-նական տարվա ընթացքում մեկ անգամ | Գործընկեր դպրոցներ և համապատասխան մեթոդմիավորումներ | 2023-2024թթ. ուստարվանից սկսած | Դասընթա-ցավարներ, ՏՀՏ և այլ մի-ջոցներ | Պետբյուջե, խնայողությու-ններ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարա-կչական աշխատանք-ների, մեթոդմիավո-րումների նախագահ-ների հաշվետվություն-ներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սովորողների տարիքային և հոգեբանական առանձ-նահատկություններով պայմանավորված՝ դասարանի արդյունավետ կառավարման, ուսուցչի բարեվարքության առանձ-նահատկություններին առնչվող հարցերի վերաբերյալ սեմինարների կազմակերպում: | Դասարանի կա-ռավարման ար-դյունավետ ձևերի կիրառում Կազմակերպել փորձի փոխա-նակման միջո-ցառումներ՝ ընդ-գրկելով գործըն-կեր դպրոցների բազմամասնագի-տական թիմին, դասղեկներին /տարվա ընթաց-քում առնվազն 1/ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդ-միավորման նա-խագահներ, դաս-ղեկներ, հոգեբան | 2023-2028թթ | Հրավիրված մասնագետ-ներ, ՏՀՏ և այլ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիարա-կչական աշխատանք-ների, մեթոդմիավո-րումների նախագահ-ների հաշվետվութ-յուններ |
| Ճշտել ուսուցիչների մաս-նագիտական կարիքները և գործընկեր դպրոցների հետ մշակել ատեստավորման կարգերով և ուսուցիչների կրթական կարիքներով պայմանավորված վերա-պատրաստման համատեղ ծրագրեր: | Ուսուցչի մաս-նագիտական աճի ապահո-վում Կազմակերպել | Գործընկեր դպ-րոցների վարչա-կան կազմ, հա-մապատասխան մեթոդմիավորում-ներ | 2023-2028թթ. | Համապա-տասխան մասնագետ-ներ, ՏՀՏ և այլ միջոցներ, ՀՀ ԳՄՍ նախարարի հրամանով սահմանվածկա րիքների գնահատման ձևին համապատասխ ան | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիարա-կչական աշխատանք-ների, մեթոդմիավո-րումների նախագահ-ների հաշվետվութ-յուններ |
| Ավելացնել դպրոցում ուսուցիչների հերթական ատեստավորման նպա-տակով իրականացվող վերապատրաստումների դասընթացավար-մասնա-գետների կազմը՝ դրանով իսկ նպաստել դպրոցում վե- | Կրթության որակի բարելավում, մասնագիտական բարձր որակներ ունեցող մանկավարժա-կան համակազմ | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մե-թոդմիավորումների նախագահներ | 2023-2028թթ. | Դասընթացա-վարներ, ՏՀՏ միջոցներ, վե-րապատրաստ-ման ձեռնարկ-ներ, մոդուլներ, տեղեկատվա-կան այլ աղ-բյուրներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիարա-կչական աշխատանք-ների, մեթոդմիավո-րումների նախագահ-ների հաշվետվութ-յուններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| րապատրաստող ուսուցիչ-ների կադրային ներուժի համալրմանը: Կազմակերպել դասալսում-ներ, արդյունքները, քննար-կել մեթոդմիավորումների նիստերում | Ուսուցիչների 20-25%-ին վերա-պատրաստել որպես դասըն-թացավարների, ովքեր ապագա-յում հանդես կգան որպես վե-րապատրաս-տողներ: | | | | | |
| «Սովորողների գնահատման նոր համակարգի մեթոդա-բանությունը և դրա կիրառ-ման առանձնահատկութ-յունները» թեմայով քննար-կումների կազմակերպում՝ հիմքում ունենալով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023թ. №11 հրամանով սահմանված չափանիշները | ՀՊՉ-ով սահմանված գնահատման համակարգի կիրառում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումների նախագահներ | 2023թ-ից՝ պարբերաբար | ՏՀՏ միջոցներ մեթոդական գրականութ-յուն, գնահատման բնութագրական ձևերի կիրառ-ման նմուշօրի-նակներ և տե-ղեկատվական այլ նյութեր | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Իրականացնել ձևավորող գնահատման արդյու-նավետության գնահատում: | Գնահատման հմտությունների բարելավում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումների նախագահներ | 2023-2028թ.թ. | Գնահատման չափանիշների սանդղակ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Գնահատման տարբեր ձևե-րին համապատասխան գործիքների մշակում և կիրառում՝ <br>• Հարցաթերթիկներ <br>• Թեստեր <br>• Գնահատման սյու-նակաշարեր /ռուբ-րիկներ/ և այլն | Գնահատման հավաստիութ-յան սկզբունքի ապահովում Կազմակերպել առնվազն 1 սեմինար-քննարկում, համատեղ մշակել գնահատման | Մեթոդմիավորումներ, ուսուցիչներ | 2023-2028թթ Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | Մշակված հարցաթեր-թիկներ, գնահատման ռուբրիկներ և այլն | | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ ներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գործիքներ և կիրառել գործնականում | | | | | |
| Ուսուցիչներին ներգրավել տարբեր հարթակներում ՏՀՏ գործիքներին տիրապետելու նպատակով կազմակերպված առկա և հեռավար վերապատրաստման դասընթացներին | ՏՀՏ միջոցների արդյունավետ կիրառում դասի ընթացքում: Ապահովել ուսուցիչների մասնակցությունը գործընկեր դպրոցների կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ | 2023-2028թթ | ԿԶՆԱԿ հիմնադրամի և այլ հարթակներում առաջարկվող առկա և հեռավար դասընթացներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Կազմակերպել վարպետության դասեր դպրոցի վերապատրաստող ուսուցիչների միջոցով: | Կրթության որակի բարելավում Վաստակաշատ և մասնագիտական բարձր որակներ ունեցող ուսուցիչների լավագույն փորձը փոխանցելու նպատակով կազմակերպել առնվազն 3-4 վարպետության դաս՝ ներգրավելով նաև գործընկեր դպրոցների ուսուցիչներին | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ, գործընկեր դպրոցներ | մշտապես | Վերապատրաստումներ իրականացնող մասնագետներ, ՏՀՏ միջոցներ և ուսումնաօժանդակ նյութեր | Պետբյուջե | Երևանի քաղաքապետարան, կրթության պետական կառավարման լիազորված մարմին, հաստատության տնօրեն, խորհրդակցական մարմիններ |
| Ներդպրոցական վերահսկողության իրականացում | Կրթության որակի | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մե- | 2023-2023թթ. | Դասալսումների արդյունք- | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա- |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| - Դասալսումներ, քննարկումներ<br>- Ամփոփիչ և ընթացիկ ստուգողական աշխատանքներ<br>- Փորձի փոխանակման դասեր և այլն<br>- Ձևավորող գնահատման չափանիշների և սանդղակների մշակում և այլն | բարելավում մինչև 55% Ձևավորել միջդպրոցական մեթոդմիավորումներ/155,89,167 դպրոցներ/, կազմակերպել փորձի փոխանակման միջոցառումներ ԲՏՃՄ առարկաների որակական ցուցանիշը բարձրացնելու նպատակով | թոդմիավորումների նախագահներ, գործընկեր դպրոցներ | | ների գնահատման սյունակաշարեր | | րակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Համալրել էլեկտրոնային ռեսուրսների պաշարների շտեմարանը յուրաքանչյուր առարկայի համար | Ռեսուրսների արդյունավետ կառավարում, կրթության որակի բարելավում | Մեթոդմիավորումներ, ուսուցիչներ, էլեկտրանային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | Մշտապես | Համացանց, ՏՀՏ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Ստեղծել տեսաձայնային դասերի շտեմարան: | Կազմակերպել վարպետության դասեր, տեսաձայնագրել և ստեղծել էլեկտրոնային պաշարների շտեմարան/առնվազն 3-4 վարպետության դաս ուստարվա ընթացքում/ | Տնօրեն, տնօրենի տեղակալներ մեթոդմիավորումներ, ուսուցիչներ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, գրադարանավար | մշտապես | Համացանց ՏՀՏ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Կազմակերպել ինֆորմատիկայի և մյուս առարկաների ուսուցիչների | | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ- | մշտապես | Համացանց ՏՀՏ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա- |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| կողմից համատեղ վարվող դասեր: | | միավորումների նախագահներ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | | | | բակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Մշակել ուսուցիչների գործունեության գնահատման չափանիշներ ու բնութագրիչներ: | Ուսուցիչների մոտիվացիայի բարձրացում կրթության որակի բարելավում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | 2023թ. | Համացանց, կիառվող տարբեր չափանիշների վերաբերյալ նյութեր | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիաբակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Կազմակերպել «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դասղեկ/դասվար», «Տարվա լավագույն մեթոդմիավորման նախագահ» և այլ անվանակարգերի մրցույթներ: | Խրախուսման ձևերի ուսուցիչների մոտիվացիայի բարձրացման ներդրված ձևերի առկայություն | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | 2023-2028թթ. | Գնահատման հարցումներ իրականացնելու նյութեր, հարցաթերթիկներ, գնահատման սանդղակներ, հաշվետվություններ, դասալսումների արդյունքներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիաբակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Կազմակերպել ուսուցիչների մեծարման միջոցառումներ՝ կիրառելով խրախուսանքի տարբեր միջոցներ: | Ուսուցիչների մոտիվացիայի աճ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | 2023-2028թ.թ. | Համապատասխան նյութեր, ՏՀՏ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիաբակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |
| Դպրոցի ամսաթերթում հաճախակի տպագրել ստեղծագործող ուսուցիչների աշխատանքները և լավագույն փորձը ներկայացնող հոդվածներ: | Ուսուցիչների մոտիվացիայի աճ | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումնե-րի նախագահներ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման | 2023-2028թ.թ. | Համապատասխան նյութեր, ՏՀՏ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիաբակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ապահովման մասնագետ, | | | | |
| Ուսուցչի աշխատանքը ներկայացնելու նպատակով օգտագործել սոցիալական ցանցերի հնարավորու-թյունները: | Ուսուցիչների մոտիվացիայի աճ | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մե-թոդմիավորումնե-րի նախագահներ | 2023-2028թ.թ. | Համապա-տասխան նյութեր, ՏՀՏ միջոցներ | Պետբյուջե | Երևանի քաղաքա-պետարան, Կրթու-թյան պետական կառավարման լիա-զորված մարմին, կառավարման և խորհրդակցական մարմիններ |
| Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող տարբեր ծրագրերին, ավե-լացնել վերապատրաստող (մենթոր) և տարակարգ ունեցող ուսուցիչներ թիվը: Ուսուցիչների կողմից ստեղ-ծագործական մոտեցման, նախագծային և նորարարա-կան այլ մեթոդների կիրառ-ման և հետազոտական կարողությունների զարգաց-ման խթանման նպատակով գործընկեր դպրոցների հետ կազմակերպել «Տարվա լավագույն հետազոտող ուսուցիչ» մրցույթը: | Կրթության որակի բարելավում (55%) Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տա-րակարգի շնորհման է ներ-կայացվել ուսու-ցիչների 20-25%: | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մե-թոդմիավորումնե-րի նախագահներ, գործընկեր դպրոցներ | Պարբերաբար | Վերապատ-րաստման առ-կա և հեռավար դասընթացներ, հետազոտա-կան աշխա-տանքները գնահատելու սանդղակներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների, ներքին գնահատման հաշվետվություններ |



# ՏՀՏ, ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաստատության վարչական և մանկավարժական աշխատակազմը հետևողական աշխատանքներ է տանում կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին համարժեք արձագանքելու նորարարական մոտեցումների ներդրման, արդի տեխնոլոգիաներին տիրապետելու հմտություններ ձևավորելու և կիրառելու առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելու և համալրելու ուղղությամբ: Աշակերտակենտրոն մեթոդների և հնարների կիրառումը դասավանդման ընթացքում դարձել է գերակա գործելաոճ, որը իր ազդեցություն է թողել ուսուցիչ- աշակերտ համագործակցությունը ավելի բարձր մակարդակ տեղափոխելու առումով: 21-րդ դարի կրթության հիմնական առանձնահատկություններից մեկը հաստատության կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ինչպես նաև վարչատնտեսական գոր-ծունեության արդյունավետ կազմակերպման գործընթացներում ՏՀՏ միջոցների օգտագործման դերի կարևորումն է:

Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի գրադարանում ստեղծվել է ռեսուրս կենտրոնի գործունեությանը համապատասխանող ուսումնական միջավայր, որի պայմանները հնարավորություններ են ընձեռում տարբեր մասնագիտական զարգացման ծրագրեր իրականացնելու և բարելավելու կրթության գործընթացի մասնակիցների կրթական և համագործակցության տեղեկատվության ապահովման նպատակով իրականացվող միջոցառումների արդյունավետությունը: Ինտերնետ կապի առկայությունը հնարավորություն է տալիս անընդհատ համալրելու ուսուցման և ուսումնառության կազմակերպման անհրաժեշտ էլեկտրոնային պաշարների շտեմարանը: Օգտագործվում են նաև ժամանակակից գրադարանային ծրագրեր: Գրադարանի պահոցները թվայնացվել են:

Դպրոցում ներդրված նորարարություններից են՝

- Ծնողական համալսարանի գործունեությունը
- «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ստեղծումը
- Օժտված երեխաների համար առանձնահատուկ ծրագրերի իրականացումը
- Դպրոցը որպես ուսուցիչների հերթական ատեստավորման վերապատրաստման կենտրոնի կարգավիճակ ստանալը
- Գործընկեր դպրոցների հետ համագործակցության հուշագրի ստորագրումը

Դպրոցի գործունեության տեղեկատվական բազայի մուտքագրման ավտոմատացումը նպաստել է դպրոցի գործունեության արդիականացմանը ավելի արդյունավետ են դարձել կառավարման գործընթացները: Վերջիններս ապահովված են ինտերնետ կապով, դյուրակիր համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակներով և այլ միջոցներով: Դասասենյակները օգտագործվում են տարբեր սեմինարներ, մասնագիտական զարգացման միջոցառումներ, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև համակցված դասեր կազմակերպելու համար:

Դպրոցի գործունեությունը ավելի թափանցիկ դարձնելու նպատակով անընդհատ թարմացվում է դպրոցի կայքէջը. տեղեկատվություն տրամադրելու նպատակով օգտագործվում են նաև սոցիալական ցանցերի և այլ հարթակների հնարավորությունները:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը նպաստում են տարբեր կրթական կայքերի հնարավորությունները և դրանցում առկա մեթոդական-ուսումնական նյութերը, տեսաֆիլմերը, ոլորտին առնչվող նորությունները և ծրագրերը: Դրանք են՝

- Kznak.am

- Ktak.am
- Cfep.am
- http://lib .armedu .am
- ihttps://www.imdproc.am/ և այլ կայքեր:
- http ://esource.armedu .an1/
- Dshh.am

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով են իրականացվում նաև դպրոցի ողջ փաստաթղթաշրջանառությունը, էլեկտրոնային մատենավարությունը, դասագրքերի պահանջարկի հայտագրման գործընթացները և այլն:

Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի կազմակերպած տարբեր վերապատրաստումները կարևոր դերակատարում ունեն վարչական անձնակազմի և ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացման, հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների ներդրման գործում: Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերը նպաստում են ուսուցիչների՝ ՏՀՏ գործիքների օգտագործման հմտությունների բարելավմանը, հեռավար ուսուցում կազմակերպելու հմտությունների զարգացմանը:

| *ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ* | *ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ* |
|---|---|
| ❖ Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառում ուսուցման գործընթացում<br>❖ Ուսուցիչների կողմից ինֆորմատիկայի ուսուցչի հետ համակցված դասերի անցկացում<br>❖ Դպրոցի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության առկայություն<br>❖ Ուսուցիչների կողմից փոխներգործուն, համագործակցային նախագծային ուսուցման մեթոդների կիրառություն<br>❖ Հեռավար ուսուցման կազմակերպման ծրագրերի իմացություն և օգտագործում մանկավարժական համակազմի կողմից<br>❖ Թվայնացված էլեկտրոնային գրադարանի առկայություն<br>❖ Էլեկտրոնային հրաձգարանի առկայություն<br>❖ Առարկայական ծրագրերի դասավանդման էլեկտրոնային ռեսուրսների առկայություն<br>❖ «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի առկայություն<br>❖ Ծնողական համալսարանի բնականոն գործունեություն | • «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի պայմանների բարելավման և ընդլայնման կարիք<br>• Ինֆորմատիկայի երկրորդ կաբինետի անհրաժեշտություն<br>• Էլեկտրոնային հրաձգարանի պայմանների բարելավման անհրաժեշտություն |

| | |
|---|---|
| ❖ MS Teams միասնական կրթական հարթակի գործիքներից օգտվելու հմտությունների տիրապետում<br>❖ Ծնողական համալսարանի կանոնակարգված գործունեություն | |

Նպատակ. Նորարարական մոտեցումների ներդրում, ուսուցման բարելավման նպատակով ՏՀՏ միջոցների արդյունավետ կիրառում

Խնդիրները՝

- Ուսուցման և ուսումնառության տեխնոլոգիաների արդի ձևերի կիրառման հմտությունների բարելավում
- Ուսուցիչների տարբեր կրթական հարթակի գործիքների օգտվելու հմտությունների բարելավում

**Ռիսկեր**

1. Ոչ բավարար ֆինանսական միջոցներ
2. Որոշ սովորողների և ուսուցիչների անտարբերություն

**Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ**

1 ֆինանսական լրացուցիչ միջոցների հայթայթում
2. Խրախուսման տարբեր ձևերի կիրառում

| Միջոցառումներ/ գործողություններ | Արդյունքների գնահատման չափանիշ | Պատասխանատու | Ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ | Ֆինանսական միջոցներ | Վերահսկողու-թյուն մեխանիզմներ |
|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցի վարչատնտե-սական համակարգողին ներկայացնել դասասենյակներն ու կաբինետները նոր սերնդի համակարգիչներով վերազինելու առաջարկ | Ուսումնական միջավայրի արդիականացում | Տնօրեն, վարչատնտեսական աշխատանքների համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | 2023-2028 թթ. | Դյուրակիր համակարգիչներ էլեկտրոնային գրատախտակներ և այլ միջոցներ | Պետական բյուջե | Մշտադիտարկում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Խրախուսել ուսուցիչներին՝ մասնակցելու կրթական տարբեր հարթակներում իրականացվող էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման հմտությունների բարելավմանն ուղղված դասընթացներին | Ուսուցիչների և սովորողների կարողունակու-թյունների բարելա-վում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | 2023-2028թ.թ | Հեռավար և առկա ուսուցման հարթակներ | Պետական բյուջե | Մշտադիտար-կում |
| Սովորողների մեդիագրագիտության կարողունակություննե րի զարգացման նպատակով կազմակերպել սեմինարներ քննարկումներ: | Կրթության որակի բարելավում | Տնօրեն տնօրենի տեղակալներ մեթոդմիավորման նախագահներ էլեկտրոնային կառավարման մասնագետ | 2023-2028թ.թ | Համակարգիչ, տեսացուցադրող սարք (պրոյեկտոր), էլեկտրոնային գրատախտակ և այլ նյութեր | Պետական բյուջե | Մշտադիտար-կում |
| «Արմաթը օդում» ծրագրի ներդնում | Սովորողների տեխնոլոգիական կրթության բարելավում | Տնօրեն,վարչատնտեսա-կան համակարգող, ծրագրի ղեկավարներ և համապատասխան մասնագետներ | 2024-2025 ուստարի | Անհրաժեշտ պայմաններ, սարքավորումներ, համակարգիչներ և այլն | Պետական բյուջե ԱՏԶՄ-ի համաֆինանսավո-րում | Մշտադիտար-կում |
| Ռոբոտաշինության խմբակի գործունեության ընդլայնում, պայմանների բարելավում | Խմբակում ընդգրկված աշակերտների աճ, մոտիվացայի բարձրացում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնագիտացված աջակցությունների գծով տնօրենի տեղակալ վարչատնտեսական աշխատանքների համակարգող տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | | Խմբակի ընդլայնված տարածք. Գույք և անհրաժեշտ սարքեր | Պետական բյուջե | Մշտադիտար-կում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սովորողների ըստ հետաքրքրություններ ի և նախասիրությունների խմբակների ձևավորում | Սովորողների նախասիրություններ ին համահունչ կրթական ծառայությունների առկայություն | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, վարչատնտեսական աշխատանքների համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | 2023-2028թ.թ. | Անհրաժեշտ պայմաններ սարքավորումներ համակարգիչներ և այլն | Պետական բյուջե | Մշտադիտար-կում |
| Աշակերտական խորհրդի միջոցով դպրոցի էլեկտրոնային ամսաթերթի հրատարակում | Աշակերտական խորհրդի ինքնավարության բարձրացում | Տնօրեն, համակարգող՝ մասնագի տական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ մեթոդմիավորումների նախագահներ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | 2023-2028թ.թ. | Անհրաժեշտ պայ-մաններ, սարքավո-րումներ, համա-կարգիչներ և այլն | Պետական բյուջե | Մշտադիտար-կում |



ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

2022-2023 ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 54 դասարան, որից 24-ը՝ տարրական, 30-ը՝ 5-9-րդ դասարաններ: Բաշխվածությունն ըստ դասարանների ներկայացված է ստորև.




Գծապատկեր 9




Գծապատկեր 10

Սովորողների թիվը՝ ըստ կրթական աստիճանների, տրված է ստորև. այն լիովին համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ –ի կողմից դպրոցին տրված լիցենզիայով նախատեսված թվաքանակին: Դպրոցում իրականացվող կրթական ծրագրերի արդյունավետության, աշխատակազմի հետևողական աշխատանքի, ինչպես նաև նյութատեխնիկական ռեսուրսների ու պայմանների շարունակական բարելավման շնորհիվ համայնքում և Երևան քաղաքում դպրոցի վարկանիշը տարեցտարի բարձրանում է: Այստեղ ուսանելու ցանկություն ունեցողների թիվը գերազանցում է լիցենզիայով ամրագրված տեղերի հնարավորությունները: Այդ պատճառով ուսուցումը կազմակերպվում է միջանկյալ հերթով:




Գծապատկեր 11

Ստորև ներկայացված է աշակերտների թվի դինամիկան ըստ ուսումնական տարիների:




Գծապատկեր 12



ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ (ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)

# ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ (ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)

Կրթության մասին ՀՀ օրենքում կրթության որակը սահմանվում է՝ որպես կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք: Վերջինիս գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ բաղադրիչների արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների.Դրանք են՝




Գծապատկեր 13

Մինչև 2030թ. կրթության զարգացման պետական ծրագրում, որպես վերջնական նպատակ՝ սահմանված է. «Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված, արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը»:

Նպատակների իրականացման համար ամրագրված ռազմավարական ուղղություններից են՝

1) ***համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում,*** որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները ՀՀ ողջ տարածքում.
2) ***կրթության արդյունավետության բարձրացում,*** ինչը կապահովի ռեսուրսի (ներառյալ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում
3) ***կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում,*** որը խարսխված է լինելու միջազգային կրթական տիրույթում և համակարգերում հայկական կրթական համակարգի ամբողջական և բովանդակային ինտեգրման, ինչպես նաև հայկական կրթական ծառայությունների և արտադրանքի արտահանման վրա՝ շահեկանորեն փոխակերպելով Հայաստանի դերը գլոբալ կրթական համակարգում:

Ծրագրում կարևորվել են նաև նախագծային ուսուցմանը՝ որպես նոր չափորոշիչների կարևոր գործիքի անցում կատարելու անհրաժեշտությունը, մասնագիտական կողմնորոշման ակումբների ստեղծումը, նոր չափորոշիչների բաղադրիչ գնահատման ձևերի բազմազանության, որակական գնահատման համակարգի, հատկապես ձևավորող գնահատման ներդրումը: «Վերջինս հնարավոր կդարձնի անցումը նաև կարողունակությունների ձևավորման աստիճանի գնահատմանը արժեքների և դիրքորոշումների ձևավորման տեսանկյունից, որը իբրև դաստիարակության գործընթաց՝ ժամանակակից դպրոցի կարևորագույն անելիքներից է» (Մինչև 2030թ. կրթության զարգացման ծրագիր):

Կարևոր ենք համարում դպրոցի զարգացման հետագա ընթացքն ապահովելու նպատակով տարբեր միջոցառումների իրականացումը, որն ավելի արդյունավետ կդարձի որակի բարձրացման ուղղությամբ աշխատակազմի գործադրած ջանքերն ու ներդրումները:

Դպրոցի տնօրենության մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից հետևողական աշխատանք է տարվել այդ բաղադրիչների ապահովման ուղղությամբ, որի շնորհիվ շատ ցուցանիշներ բարելավվել են: Դրան նպաստել են

ընթացիկ գնահատման մեխանիզմների կիրարկումը, ներքին գնահատման գործիքակազմի օգտագործումը, կադրերի վերապատրաստման աշխատանքների կատարելագործումը, դասավանդման հմտությունների զարգացումը, վերահսկողության տարբեր ձևերի ներդրումը, ուսումնական միջավայրի նորացումը և այլն: Դրանց արդյունավետության մասին ներկայացված է նախորդ բաժիններում:

Վերջին հինգ տարիներին ուսման որակի զգալի բարձրացում չի արձանագրվել, սակայն այն 49-52%- ի շրջակայքում է: Այս հանգամանքը պայմանավորված է երկու ուսումնական տարիներին տարածված համավարակով և պատերազմական իրավիճակով, որոնք իրենց հետ բերեցին հեռավար ուսուցման անցնելու անհրաժեշտություն: Չնայած դրան՝ սովորողների առաջադիմությունը կազմել է 100%: Որակի վերաբերյալ տվյալները ըստ ուսումնական տարիների ունի հետևյալ պատկերը.




Գծապատկեր 14

Դպրոցի ներքին գնահատման արդյունքներով  սովորողների միջին գնահատականները միջին և միջինից բարձր տիրույթում են: ***Բարձր առաջադիմությամբ սովորողների տոկոսը ըստ կրթական աստիճանների*** տրված է ստորև.

**Տարրական դասարաններ**




**5-9-րդ դասարաններ**




Գծապատկեր 15

Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը հինգ ուսումնական տարիների կտրվածքով ունի հետևյալ պատկերը.




Գծապատկեր 16

Ըստ ներքին գնահատման հաշվետվությունների՝ ստորև ներկայացված է սովորողների առաջադիմության և կրթության որակի ցուցանիշները երեք ուսումնական տարիների կտրվածքով.

2020-2021ուստարի

| Քննական առարկա | Առաջադիմության ցուցանիշ (%) | Որակի ցուցանիշ (%) |
|---|---|---|
| Հայոց լեզու | 99 | 51 |
| Գրականություն | 99 | 56 |
| Մաթեմատիկա | 100 | 48 |
| Հայոց պատմություն | 100 | 48 |
| Բնագիտություն | 100 | 47 |
| Օտար լեզու | 98 | 57 |
| Ֆիզկուլտուրա | 100 | 78 |

2021-2022 ուստարի

| Քննական առարկա | Առաջադիմության ցուցանիշ (%) | Որակի ցուցանիշ (%) |
|---|---|---|
| Հայոց լեզու | 100 | 50 |
| Գրականություն | 100 | 59 |
| Մաթեմատիկա | 100 | 46 |
| Հայոց պատմություն | 100 | 49 |
| Բնագիտություն | 100 | 31 |
| Օտար լեզու | 100 | 60 |
| Ֆիզկուլտուրա | 100 | 82 |

2022-2023 ուստարի

| Քննական առարկա | Առաջիմության ցուցանիշ (%) | Որակական ցուցանիշ (%) |
|---|---|---|
| Հայոց լեզու | 100 | 65 |
| Գրականություն | 100 | 54 |
| Մաթեմատիկա | 100 | 47 |
| Հայոց պատմություն | 100 | 49 |
| Բնագիտություն | 100 | 55 |
| Օտար լեզու | 100 | 66 |
| Ֆիզկուլտուրա | 100 | 85 |

## *ԿԱՊԿ սովորողների թիվ*




*2018-2019 (4 աշ.)*

*2019-2020 (5 աշ.) 3 միջին,2 թեթև*

*2020-2021 (7 աշ.) 5 միջին,2 թեթև*

*2021-2022 (6 աշ.) 3 միջին,3 թեթև*

*2022-2023 (6 աշ. ) 6 միջին*

Գծապատկեր 17

Տարբեր մակարդակների օլիմպիադաներին սովորողների մասնակցությունն ունի հետևյալ պատկերը.

| Ցուցանիշ | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | 5 սովորող 0.3% | 6 սովորող 0.3% | 11սովորող 0.7% | 14 սովորող 0 0.9% | 17 սովորող 1.4% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը հաստատության սովորողների ընդահնուր թվի համեմատ | 3 սովորող 0.2% | | 2սովորող 0.1% | 7 սովորող 0.4% | 5 սովորող 0.3% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | 3սովորող 0.2% | | 3 սովորող 0.2% | 11սովորող 0.7% | 6 սովորող 0.4% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | | | 2 սովորող 0.1% | 2 սովորող 0.1% | 2 սովորող 0.1% |
| Միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | | | | | |
| Միջազգային օլիմպիադաներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | | | | | |
| Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | 40 սովորող 2.6% | 114 սովորող 7% | 130 սովորող 8% | 44 սովորող 2.8% | |
| Միջազգային մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 10 սովորող 0.7% | 12 սովորող 0.2% | - | 7 սովորող 16% | |

2022-2023 ուստարում ընդհանուր առմամբ օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցել է 304 աշակերտ: Դպրոցը մասնակցել է նաև «Русский медвежонок» Kooriz (2 մրցանակ) մրցույթներին և ստացել խրախուսական մրցանակներ: Դպրոցը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ աշակետների ներգրավվածությունը նմանատիպ մրցույթներում բարձրացնելու համար: Կատարվում են իրազեկման լայնածավալ աշխատանքներ թե՛ աշակերտների և թե՛ ծնողների շրջանում:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| <ul><li>Հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչների պահանջները իրականացնող թիմի առկայություն</li><li>Սեփական նախաձեռնություններով հանդես եկող մանկավարժական և աշակերտական համակազմ</li><li>Վերապատրաստված ուսուցիչների համակազմի առկայություն</li><li>Սովորողների անհատական կարիքների հաշվառմամբ ուսուցման կազմակերպում</li><li>Կրթության որակի մշտադիտարկման վերահսկողության գնահատման մեխանիզմների կիրառում</li><li>Ներդպրոցական վերահսկողության պլանի առկայություն</li><li>Դասավանդման մշտադիտարկման և վերահսկողության ձևերի կիրառում</li><li>Հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ և այլընտրանքային գնահատման ձևերի կիրառում՝ առարկայական չափորոշիչներին համապատասխան կրթության որակը գնահատելու համար</li><li>Կրթության որակի ցուցանիշների արդյունքների ամփոփման հիմքի վրա վերլուծությունների առկայություն</li><li>Քննադատական մտածողության կարողություններով օժտված սովորողներ</li><li>Ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ ունեցող աշակերտներ</li></ul> | <ul><li>Ըստ հետաքրքրությունների նոր ակումբների անհրաժեշտություն</li><li>Օժտված և շնորհալի սովորողների համար նոր ծրագրերի ներդրման կարիք</li><li>Սովորողների ստեղծագործական կարողությունները ներկայացնող դպրոցական կայքի ոչ ամբողջական պատկերը</li><li>էլեկտրոնային ամսաթերթի բացակայություն</li><li>Սովորողների քննադատական-վերլուծական մտածողության հետազոտական և նախագծային աշխատանք կատարելու հտությունների զարգացման կարիք</li><li>Նոր չափորոշչով սահմանված՝ սովորողների կարողունակությունների զարգացման անհրաժեշտություն</li><li>Գրադարանի և տարբեր էլեկտրոնային ռեսուրսներից օգտվող սովորողների ցածր տոկոս</li><li>Որոշ ուսումնական տարիներին «գերազանց» առաջադիմությամբ սովորողների թվի նվազում, որը պայմանավորված էր համավարակի հետևանքով հեռավար կրթության ձևին անցնելու հանգամանքով և 44-օրյա պատերազմի ընթացքում սոցիալ-հոգեբանական գործոններով:</li><li>Գրադարանից օգտվելու ցանկություն ունեցող սովորողների մոտիվացիայի պակաս:</li><li>Կախվածություն բջջային հեռախոսներից և սոցիալական ցանցերից</li><li>Դասարաններում սովորողների բարձր խտություն:</li><li>Ոչ բավարար մասնակցություն ուսումնական գործընթացների բարելավումների ուղղությամբ:</li></ul> |

| | |
|---|---|
| - Բարձր դասարաններում հետազոտական աշխատանքներ իրականացնելու մոտիվացիա ունեցող աշակերտներ<br>- Սովորողների արժեքային համակարգի ձևավորման նպատակով կազմակերպվող միջոցառումներին ակտիվ մասնակցություն<br>- Դպրոցում գործող խմբակներում և արտադպրոցական կրթության հաստատություններում սովորողների ընդգրկվածություն<br>- Առարկայական, սպորտային, մշակութային օլիմպիադաներին և այլ մրցույթներին մասնակցություն<br>- Բարձր առաջադիմություն ապահովելու մոտիվացիա<br>- Սովորելու, նորը յուրացնելու մեծ ցանկություն և ձգտում<br>- Գործընկեր դպրոցների սովորողների հետ հետազոտական աշխատանքներ իրականացնելու ձգտում և մասնակցություն<br>- Դպրոցի կառավարմանը մասնակցելու փորձի առկայություն<br>- Միջդպրոցական միջոցառումների և համագործակցության առկայություն<br>- Աշակերտական գիտաժողովներին մասնակցելու պատրաստակամություն (ԿԶՆԱԿ, ԵՊՀ գործընկեր դպրոցներ և այլ)<br>- Կրթության որակի բարելավմանն ուղղված հստակ ծրագրերի և պլանավորված գործողությունների առկայություն<br>- Կարիքների գնահատման սանդղակների առկայություն | - Հայրենագիտական արշավների էքսկուրսիաների կազմակերպման սեփական նախաձեռնությունների պակաս |

| | |
|---|---|
| - Կրթության որակի ապահովման խոչընդոտների բացահայտման նպատակով կրթության գործընթացի մասնակիցների շրջանում հարցումների իրականացման ներդրված մշակույթ<br>- Իրավիճակի հայտորոշման նպատակով թեմատիկ և ամփոփիչ ստուգողական աշխատանքների կազմակերպում<br>- Ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողների ընդգրկում երկարօրյա խմբերում<br>- Ներդպրոցական վերահսկողության և մշտադիտարկումների կանոնակարգված իրականացում<br>- Օժտված երեխաների համար առանձնահատուկ ծրագրերի առկայություն և այլն | |

**Նպատակ.** Հանրակրթության պետական և առարկայական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում:

**Խնդիրներ.**

1. Զարգացնել գիտելիքներ ձեռքբերելու անհրաժեշտության գիտակցում և սովորելու նկատմամբ հետաքրքրություն
2. Խթանել մանկավարժական համակազմի նորարական միտքն ու մոտեցումները
3. Բարելավել կրթության որակի ցուցանիշները
4. Բարձրացնել մշտադիտարկումների, վերլուծությունների և գնահատման կիրառման արդյունավետությունը
5. Բարելավել սովորողների արժեքային համակարգի ձևավորման և հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները

**Ռիսկերը**

1. Ուսուցիչների կողմից դասավանդման ընթացքում կառավարման վարչահրամայական ոճի կիրառում
2. Համագործակցային մեթոդների կիրառման առանձնահատկությունների ոչ բավարար իմացություն
3. Սովորողների և համակազմի մոտիվացիայի պակաս

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ**

1. Վերապատրաստման դասընթացների կազմակերպում
2. Համապատասխան մեթոդական նյութերի տրամադրում
3. Վարպետության դասերի կազմակերպում
4. Խրախուսման տարբեր միջոցների կիրառում

| Միջոցառումներ, Գործողություններ | Արդյունքների գնահատման չափանիշ | Պատասխանատու | Ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ | Ֆինանսական միջոցներ | Վերահսկման մեխանիզմներ |
|---|---|---|---|---|---|---|
| Տարեկան երկու անգամ դպրոցի կառավարումը վստահել աշակերտական խորհրդին՝ «Դպրոցը կառավարում են աշակերտները» կարգախոսով | Սովորողների մոտ կրթության կառավարման հմտություններ ի զարգացում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, համա-կարգող՝ մասնա-գիտական աջակ-ցությունների գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ | 2023-2028թթ. ուսումնակա ն տարիների առաջին և երկ-րորդ կիսամ-յակում | Համապա-տասխան նյութեր, մեթոդական ուղեցույցեր | Պետբյուջե | Մշտադիտարկում |
| Դասավանդման ընթացքում մշտապես կիրառել սովորողակենտրոն փոխներգործուն համագործակցային նախագծային ուսուցման մեթոդներ | Սովորողների սոցիալական հմտություններ ի զարգացում Տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնել ուսումնական նախագիծ դպրոցի 4-9-րդ դասարանում սովորողների մասնակցությամբ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդ-միավորումներ, ուսուցիչներ | 2023-2028թթ Ուստարվա ընթացքում | Համագործակ-ցային խմբերով աշխատելու համար կահավորված դասասենյակ-ներ, հանդիսությու նների սրահ, ՏՀՏ և այլ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում Ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադսատիար ակչական աշխատանքների , մեթոդմիավորումնե րի, ներքին գնահատման հաշվետվություննե ր |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Գումարել աշակերտական կոնֆերանս, որտեղ սովորողները կներկայացնեն նախագծային և հետազոտական աշխատանքները | | | | | |
| Արդի տեխնոլոգիաների օգտագործում դասավանդման ընթացքում | Սովորողների մոտիվացիայի բարձրացում, դասավանդման արդիականացում Ուսումնական գործընթացում կիրառել ինտերակտիվ մեթոդներ, ԲՏՃՄ առարկաներն ուսուցանելիս օգտագործել վիրտուալ լաբորատորիան | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մե-թոդմիավորումներ, մանկավարժական աշխատողներ | 2023-2028թ.թ | Համապա-տասխան միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադսատիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Աշակերտների համար ձևավորել ըստ հետաքրքրություններ ի նոր ակումբներ | Սովորողների ստեղծագործական | Տնօրեն տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումներ, | 2023-2028թ.թ | Համապա-տասխան պայմաններ, միջոցներ,սով | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ունակություննե րի զարգացում Շարունակել «Ստեղծարար մտածողություն », «Բանավեճի ակումբ», «Պատանի բնապահպաննե ր» ուսումնական խմբակների և ակումբների գործունեությու նը | մանկավարժական աշխատողներ | | որողների նախասիրությ ունների գնահատման հարցման թերթիկներ | | ուսումնադատիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Կազմակերպել դպրոցի էլեկտրոնային ամսաթերթի հրատարակման աշխատանքները, որտեղ իրենց ստեղծագործութ-յուններով հանդես կգան աշակերտները, ուսուցիչները և կրթության գործընթացի մյուս մասնակիցները: | Սովորողների և ուսուցիչների մոտիվացիայի բարձրացում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումների և աշակերտական խորհուրների ղեկավարներ, էլեկտրոնային կառավարման և դասա-վանդման ապահովման մասնագետ | 2024թ. | Համապա-տասխան պայմաններ և միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Գործընկեր դպրոցների հետ կազմակերպել աշակերտական | Հետազոտական աշխատանքներ կատարելու | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մանկավարժական, | Ուստարվա ընթացքում մեկ անգամ | Համապա-տասխան պայմաններ և միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գիտական կոնֆերանս, որտեղ սովորողները կներկայացնեն իրենց նախագծային և հետազոտական աշխատանքները: Խրախուսման նպա-տակով լավագույն աշխատանքները արժանացնել խրա-խուսական մրցանակների | հմտություններ ի զարգացում. լավագույն աշխատանքներ ը ներկայացնել ԿԶՆԱԿ՝ գիտական հանդեսում տպագրության առաջարկով | աշակերտական խորհուրդներ | | | | |
| Մշակել «Տարվա լավագույն աշակերտ», մրցույթի չափանիշներն ու դրանց համապատասխան տարբեր անվանակարգերում մրցանակների արժանացնել սովորողներին: | Կրթության որակի բարելավում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումներ, մանկավարժական աշխատողներ, ա-շակերտական խոր-հուրդ | Մեկնարկը ուստարվա սկզբին | Դպրոցի կայք-էջ, էլեկտրոնային ամսաթերթ, հարցաթեր-թիկ-ներ, գնահատման չափանիշներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Պարբերաբար սովորողների և ուսուցիչների շրջանում իրականացնել հարցումներ կապված ուսուցման և ուսումնառության | Կրթության որակի բարելավում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումներ, աշակերտական խորհուրդ | Ուստարվա ընթացքում | Հարցաթեր-թիկներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հիմնախնդիրների բացահայտման հետ | | | | | | ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Օժտված երեխաների հետ աշխատանքներ տանելու նպատակով կազմակերպել հանդիպումներ հանրապետության հայտնի մասնագետների հետ, ի-րականացնել առարկայական օլիմպիադաներին մասնակցելու նախա-պատրաստական հավաքներ, դասընթացներ: | Օլիմպիադանե-րում սովորողների թվի ավելացում Շարունակել դպրոցում գործող օլիմպիական խմբակների գործունեությու նը | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մե-թոդմիավորումներ | Ուստարվա ընթացքում | Հրավիրված մասնագետ-ներ, ուսու-ցիչներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադսատիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Տարրական դասարանների սովորողների համար ուսումնական պլանում ներառել «Տրամաբանական խաղեր» դասընթացը | Սովորողների քննադատակա ն մտածողության բարելավում Կազմակերպել վերապատրաս տման դասընթացներ դասվարների համար՝ հրավիրելով համապատաս խան | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումներ, ուսուցիչներ | 2024-2025 ուստարվա-նից | Ծրագիր, ուսումնաօ-ժանդակ նյութեր և այլ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադսատիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մասնագետներ ի | | | | | |
| Բարձր դասարանների սովորողների համար ու-սումնական պլանում նե-րառել «Ֆինանսական կրթությունը դպրոցում» դասընթացը | Սովորողների տնտեսական կարողունակու թյունների բարելավում Հրավիրել ոլորտի լավագույն մաս-նագետներին Իրականացնել փորձի փոխա-նակում՝ ներ-գրավելով գործընկեր դպրոցների ուսուցիչներին | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորումներ, ուսուցիչներ | 2023-2024 ուստարվա-նից | Ծրագիր, ուսումնաօ-ժանդակ նյութեր և այլ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադասատիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Ավելացնել «Արմաթ» ին-ժեներական լաբորատո-րիայի խմբակում ընդգրկված սովորողների թիվը | Սովորողների կառուցողական ունակություննե րի բարելավում Ապահովել լաբորատորիա հաճախող սովորողների աճ մինչև 20-25% | Տնօրեն, համակարգող, տնօրենի տեղա-կալներ, մեթոդմիավորումնե ր, ուսուցիչներ | 2025-2026 ուստարվա-նից | Ուսումնա-կան նյութեր և այլ միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադասատիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների, ներքին գնահատ-ման հաշվետվութ-յուններ |
| Կազմակերպել սովորողների այցելություններ ԲՈՒՀ-եր, այլ | Մասնագիտակ ան կողմնորոշման նպատակով | Տնօրեն, համակարգող, մասնագիտական աջակցությունների | Պարբերա-բար | Համպատաս-խան միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գիտական հաստատություններ: | կազմակերպել 2-3 հանդիպում գիտության ոլորտի ներկայացուցիչ-ների,ծնողական համալսարանի տարբեր մասնագետների հետ | գծով տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ | | | | ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների, ներքին գնահատման հաշվետվություններ |
| Մեկնարկել «Ես իմ երկրի ակտիվ քաղաքացին եմ» ծրագիրը: <br>- Կազմակերպել «Ակտիվ քաղաքացի», «Երևանն իմ քաղաքն է» թեմաներով շարադրությունների մրցույթ: Լավագույն շարադրություն ճանաչված աշխատանքների հեղինակներին հանձնել խրախուսական մրցանակներ: Նյութերը | Սովորողների արժեքային համակարգի ձևավորում | Տնօրեն, համակարգող, մասնագիտական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ, աշակերտական խորհուրդ | Մեկնարկը ուստարվա սկզբին | Համպատասխան միջոցներ | Պետբյուջե | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների, ներքին գնահատման հաշվետվություններ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրատարակել դպրոցի էլեկտրոնային ամսաթերթում:<br>- Կազմակերպել այցեր մանկատներ, զորամասեր, կրթամշակութային օջախներ, ապահովել սովորողների մասնակցությունը համաքաղաքային իրադարձություններին, կրթամշակութային միջոցառումներին:<br>- Կազմակերպել սեմինարներ, քննարկումներ, բանավեճեր, հանդիպումներ մշակույթի և պետական գործիչների հետ: | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կազմակերպել հայրենագիտա-կան արշավներ, այցելություններ մշակութային օջախներ | | | | | | |



# ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

